


766

8-82
U-50



ԿԱՐՄԻՐ ԲԱԿՍԻ
ՔՍԱՎԱՐՁՎԱՐԻ

1918 XX 1938



3(082)
Ա-47

ՊԵՏՐՈՎ

24 ՀԱՅ 2009

8-82
Հ-50

ԳՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՊԻՋԵՐԻ

12 OCT 2009

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔՍԱՆԱՄՅԱԿԻՆ

1918—1938

ԿԱԶՄԵՑԻՆ՝ ԱՃԵՄՑԱՆ Զ.

ՈՀՈՆՅԵԱՆ Ա.

Գ Ե Տ Հ Բ Ա Տ

ՀԱԿԵԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Յ Ե Ր Ե Վ, Ա. Ն

1938


7-6 FEB 2013

766



6225

38



Վ. Ի. Լենին

ԼԵՆԻՆ ՀԱԿԱՆ

(Փոխադրություն ժողովրդական պոեմ
«Լենին փաշայի»)

Են ո՞վ ե, վոր ժողովրդին պահում ե,
Են ո՞վ ե, վոր սանչպարներին ողնում ե,
Են ո՞վ ե թե թիկունք տալիս բանվորին.—
Նա մի հոկա յե, անունը՝ Լենին։

Մի արդար որենք կա, անունը՝ բոլշևիկ,
Ես որենքի ստեղծողն ե Լենին հոկան։
Բոլշևիկը՝ հարուստներին մահ ու չարիք,
Ժողովրդին՝ թե՛ պահապան, թե՛ բարեկամ։

Դանակն արդեն կտրել, հասել եր վոսկորին...
Մի աղքատի տղա յեր են հոկա Լենին.
Կովի յելավ ցար-սուլթանի պետության գեմ, —
Կովով, — ասաց, — աղքատներին տի ազատեմ...

Տերությունը քաշեց յեկալ զորք-զորապետ.
Հարուստները դրին իրենց գանձն ու վոսկին.
Աղա-բեկերն յելան ինչպես մի պղտոր զետ,
Ու ոգնության յեկան են ցար-թագավորին.
Քանց մի վիշապ արշավեցին զեպի Լենին։



Լենին կանչեց իրա աղքատ Փաղիրներին, —
Կանչեց քյասիր, բանվոր, չարքաշ ծառաներին,
Ինչքան կային՝ թափվան Լենինին ոգնության
Քամու նման սարից, ձորից, սուր սլացան,
Քլունդ, մահակ, փայտ, չաք արած՝ թուր-հրացան։

Լենին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Ստալին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Կլիմ հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Սերգ հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Դիլով հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Կալինին հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Շահումյան հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Միկոյան հսկան հեծավ իր ձին, քշեց առաջ.
Արշավեցին հսկաները կամքով համառ,
Նրանց հետքից սուրաց կարմիր զորքն անհամար։

Տերություններն ու հարուստներն իրենց զորքն առանց
յեկան։

Ամեն կողմից ներս թափվեցին բանակները
տերունական։
Ողնականներն իրենց զորքն առան եկան.
Աղվես ինպիրզն իրա զորքը առավ եկավ.
Ֆրանգստանն իրա զորքը առավ եկավ.
Կոլոտ ծապոնն իրա զորքը առավ եկավ.
Ամերիկան իրա զորքը առավ եկավ.
Չին-մաչինը իրա զորքը առավ եկավ.
Ոսման-Տաճիկն իրա զորքը առավ եկավ.
Աջամ-Պարսիկն իրա զորքն առավ եկավ.
Մորա Սուլթան իրա զորքը առավ եկավ.
Ալման-Գերման իրա զորքը առավ եկավ.
Նրանք բոլորն կովի ելան Լենինի դեմ,
Վոր աղատված ժողովրդին հաղթեն, ջարդեն։

Հարուստների զորքի մի մասն՝ փողով վարձկան,
Մի մասը՝ նուրբ, փափուկ ապրած, նազուկ, անբան,
Հարուստների զորքի մի մասն՝ վախկոտ, ջանպահ,
Մի մասն՝ մարդիկ, անծանոթ ու ոտարական;
Են, վոր փողով եր եկել, իրա գլուխն եր պահում,
Են, վոր փափուկ եր պահվել, իրա գլուխն եր ծածկում,
Են, վոր վախկոտ ջանպահ եր, վախենում եր ու
ծլկում.

Փախչում եյին լեղաճաք զորքի շարքերը անծեր,
Միայն ոտար ու անհոգ մարդիկն եյին մնացել...

Են, վոր Լենին քաջի մարդիկն եյին, մեկ սիրտ
եյին, մեկ հոգի,
Իրենց տիրած դիրքը յերբեք չեյին տալիս վոչ վոքի.
Բոլորն ել զուրկ, դժուակատ, անտուն աղքատներ,
Բոլորն ել զուրկ, անյեզ, անարտ ոանչպարներ,
Բոլորն ել զուրկ, անգործ, աղքատ բանվորներ,
Աշխարհի խեղճ, սիրտը վառված մարդիկ եյին
բոլորն ել։


Զորքն ու ժողովուրդը զարկին, զարկվան իրար հետ,
Ծեծին, ծեծկվան իրար հետ։
— Ե՛յ, վրեժի ժամն ե, — կանչեց Լենինը զորապետ,
Զարկե՛ք, ձեր թշնամուն փուչ արեք,
Զարկե՛ք, վոր միշտ աղատ շունչ առնեք։
— Ե՛յ, — ձայն տվեց ցար-սուլթանը իր զորքերին, —
Զարկե՛ք եղ մերկ, չփախ-չփլուխ նախիրներին,
Ով շնտ ջարդի, նրան կտամ խաչ ու մեղալ,
Քաղցածների եղ խուժանը կուզի խլել
Թուրս ու թագս, տերությունս սուրբ ու արդար։
Զարկին, զարկվան առավոտից մինչ իրիկուն.
Զորքերի մեջ ինչքան կային ոանչպար մարդիկ,
Զորքերի մեջ ինչքան կային բանվոր մարդիկ,

Ասին՝ ինչո՞ւ զարկենք մենք մեր Փաղիր
յեղայրներին,
Բոլորն վախան ու միացան մեծ Լենինին:

Եկան հասան սեվ բանվորներ հազար-հազար.
Նրանց հետքից հողագործներ հազար-հազար.
Նրանց հետքից մերկ-քաղցածներ հազար-հազար,
Նրանց հետքից նոքար, հոտաղ հազար-հազար.
Նրանց հետքից մերկ-քաղցածներ հազար-հազար,
Նրանց հետքից անհողանջուր հազար-հազար...
Ողնությունը քամու նման եկալ հասավ,
Լենին քաջի կողմը պնդեց, հզորացավ,
Թագավորի կողմը հոգնեց ու թուլացավ:
Զարկին, զարկվան, զումանն ելավ աշխարհ բռնեց.
Զարկին, զարկվան, լեշը շերտ-շերտ գետին փովեց:
Ընկածների արյունն ելավ կապեց մի գետ,
Եղ արհագետ գլորում եր ժայռեր, քարեր—
Ամեն մի ժայռ, ամեն քար՝ մի հսկա լեռ:
Զարկին, զարկվան, լենին քաջի զորքը դուեց,
Զո՞ւ քաշեցին, առաջ թռան քաջերն առյուծ.
Զնայեցին ել գնդացիր, տանկ, հրացան,
Կրծքով բացին իրենց ճամբան զորքի միջով,
Վոտքերի տակ լեշը շերտ-շերտ կոխին անցան,
Յերկինք-գետինք փակեց, ծածկեց արյան մի ծով:
Յոթն ընկնում եր, մեկն ացնում եր, նետվում առաջ:
Լեշն թափվում եր ինչպես աշնան խոխիլ տերև...
Ընկնում եյին, մեկն՝ անգլուխ, մեկը՝ անթև,
Ամեն կողմից՝ վիրավորի լաց ու հառաչ:
Լենին հսկան կերթար առաջ բայրադ բռնած,
— Հե՛յ, հե՛յ, տղե՛րք, առաջ թոեք, որը մերն ե...
Առաջ անցավ քաղցածների բանակն ահեղ,
Տերունական զորքը խառնվեց, փախավ ցրիվ...
Լենին քաջի զորքը թափվեց ինչպես մորեխ,
Ինչպես յերկնքից մեկեն իջած անթիվ արծիվ,
Ինչպես զարնան հեղեղալի գետերն անդութ,
Ինչպես ծովի փոթորիկը փրփրածին,
Ինչպես կայծակ, մայիս ամսի վարար կարկուտ,
Ինչպես սամում... յերկինք-գետինք խառնվեցին:

Լենին հսկան գրոհ տվեց, բոլորն առավ.
Առավ նրանց թնդանոթներ—զենքեր բոլոր,
Առավ նրանց գնդացիրներ, տանկեր բոլոր,
Առավ նրանց սավառնակներ, ոռամբեր բոլոր.
Բոլոր առավ, նրանց թողեց տկլոր ու մերկ,
Տվեց-ցրվեց, քանդեց, փոեց աշխարհով մեկ...

Լենին հսկան բոլշևիկի որենք դրեց.
Յերկրի կարգը գլուխն ի վեր նա չուռ տվեց.
Են առաջվա հարուստներին արեց կատու,
Խլեց ամեն ինչ նրանց ձեռքից, թողեց անտուն:
Են առաջվա աղքատներին արեց տան տեր,
Նրանց տվեց յեզ, կով, այգի, հող ու հանդեր:
Են բեկերին, աղաներին դարձրեց գերի,
Գործից գցեց, քչեց խորքերն եղ բոլորին.
Են առաջվա չոբաններին, նոքարներին:
Ռատում տվեց, ղեկավարներ կարգեց յերկրին:
Վողջ յերկիրը գլուխ տվեց բանվորներին,
Վողջ յերկիրը գլուխ տվեց ուանչպարներին,
Վողջ յերկիրը գլուխ տվեց նոքարներին:
Են վոր խեղճ եր, անճար, քաղցած, տարավ առաջ,
Ով հարուստ ըր, աղա ու բեկ, գլխին զարկեց,
Քշեց-զնաց մոր թեփ տակ մտավ անդարձ,
Կամ թե քաղցած, ծարավ շրջեց, վերջը սատկեց:
Յերկիրն մաքրեց են խմաստուն լենին հսկան,
Թողեց նրան, ով սիրում ե սուրբ աշխատանք.
Ինչպես արև, ինչպես հզոր մի բարեկամ,
Փողովրդին առավ իր լայն թեերի տակ:
Փոխաղբեց՝ Սարմեն



Ի. Վ. ԱՏՎԵԼԻՆ

Ս Տ Ա Լ Ի Ն

Աքիլեսին Հոմերն յերգեց, Ռոստամ-Զալին՝ Ֆիրդուսին,
 Վոսկեղոծվեց հազար յերգով Բոնապարտի փառքը սին,
 Հազար կայծակ փայլատակեց մրրիկներում արնաներկ,
 Ու շողացին գիշերներում հազարավոր ասուալներ,
 Բայց տառապած մարդու համար չեր ճառագել մի արև,
 Մարքսի նման ճանանչափայլ, Ենդելսի պես հանձարեղ,
 Լենինի պես բոցակորով, Լենինի պես լուսահորդ
 Յեղ քեղ նման հստակ ու մեծ, ով պողպատե՛ առաջնորդ.
 Չի խավարի ծիրանավառ հորիզոնում պատմության
 Չեր հանձարի արեգնային չորրորդությունը տիտան.
 Նա հավիտյան կծավալվի արեգելքից արեվմուտք
 Յեղ կպատռի հզոր լույսով ապագայի քողը մութ:
 Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն գրիչ ու քնար
 Ու յերգելով չեն սպառի ձեր մեծությունն անհընար,
 Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,
 Կտան դարերը ձեզ վայել հուշարձաններ փառավոր:
 Իսկ յես—զինվորդ խանդավառ, հայ լենինյան բանաստեղծ—
 Բերում եմ քեղ ժողովրդիս յերախտապարտ սիրտը մեծ,
 Յերգում եմ քեղ, մեծ Ստալին, դու, հարազատ ամենքին,
 Դու, աղքերի յերջանկության ճարտարագետ ու դարրին:
 Կանդնած եր նա, իմ ժողովուրդն, անկման վիճի յեզերքին
 Իր հանձարի հազարամյա զոհարներով թանկադին,
 Կանդնած եր նա անդունդի մոտ անողնական ու հյուծված,
 Արյունակից և այլազգի վոստիներից հալածված.
 Մահվան կարմիր մրրիկների ամենակուլ բերանում
 Արյունաքամ բազուկներով մի յելք եր նա վորոնում:
 Ազատարար Հոկտեմբերի քայլերն այնժամ թնդացին,
 Հնչեց քո ձայնը Լենինյան, Լենինի հետ միասին:

Դուք փրկության լույս նետեցիք ժողովրդին իմ չոքած,
 Դուրս կոչելով գերեզմանից դեպի կյանքի դուռը բաց,
 Նա վեր կացավ գոտեպնդված, վոստնեց թափով ահագին
 Ու միացավ կոմունիզմի աշխարհայերթ բանակին:
 Մեռավ լենինն ու մարդկության սիրու մի նպահ դադարեց,
 Շողում եյիր հորիզոնում դու վորպես նոր մի արև.
 Նախորդներիդ հզոր լույսով և քո լույսով սեփական
 Տանում ես դու յերկիրն ահա դեպի պայծառ ապագան,
 Անունդ խոր յերդի նման մարդկանց հոգին վողողում,
 Թել և տալիս և հիասքանչ հերոսության և մզում:
 Յեվ իմ չքնաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
 Իր նոր աշխարհն ե կառուցում քեզնով լեցուն մի սերունդ:
 Յեվ յես—նրա ծոցից յելած մի խանդավառ բանաստեղծ—
 Բերում եմ քեզ իմ յերջանիկ ժողովրդի սերը մեծ.
 Յերգում եմ քեզ, մեծ Ստալին, դու, հարազատ ամենքին,
 Դու, մարդկային յերջանկության ճարտարապետ ու դարբին:

Ի.ՅԱ. ՍԱԴՈՒՑԵՎ.

ՅԵՐԳ ՀԱՅԻԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Այս անեղբն, այս հեռուն հուրհրան,
 Այս խոտը, ծաղկունքն ու հացն հուրթի,
 Այս բերկրանքն ու խինդը անսահման,—
 Այդ դու' յես, հայրենիք իմ, դու':

Այս լեռներն, անտառներն ու լճեր,
 Այս գետերն, ուղիներ ու կամուրջ,
 Այս լույսերն անհատնում ու անեղբ,
 Այդ դու' յես, հայրենիք իմ, դու':

Այս շախտերն, ավաններ, զավոդներ,
 Այս պուրակն այնպես գեղ, կենսատու,
 Այս յերգերն ազատ ու լի կյանքի,—
 Այդ դու' յես, հայրենիք իմ, դու'.

Այս հողի լիությունն բարերար,
 Այս վոսկյա մրգերը հասուն,
 Այս խինդը ջահել ու կենսարար,—
 Այդ դու' յես, հայրենիք իմ, դու':

Այս թեթեվ հանգիստը՝ ծերության,
 Այս մանկանց ժպիտները ծաղկուն,
 Այս արևն աչքերում մայրական,—
 Այդ դու' յես, հայրենիք իմ, դու':

Այս հեղեղն աստղային սալառող,
 Այս թոիչքն այնքան բարձր ու հեռու,
 Այս վերելքն հպարտ ու խոյացող,—
 Այդ դու' յես, հայրենիք իմ, դու':

Այս հեղիքը կառուցվող շենքերի,
Այս հսկող աչքերը միշտ արթուն,
Այս խիղախ ցեղը հերոսների,—
Այս դուռ յես, Հայրենիք իմ, դու:

Այս ցեղը ձուլվածքի Ստալինյան,
Այս շերտերն անվարար, հուժկու,
Այս որեղն անսահման խնդրության,—
Այդ դռու յես, հայրենիք իմ, դու:


Այս դաշինքն ազգերի՝ հարազատ,
Այս փունջը — քաղաք-գյուղ վառվուն,
Այս սիրտը մարդկության հարազատ,—
Այդ դու յես, հայրենիք իմ, դու:

Այս գոռ փառքն ե խնդուն ջանքի,
Այս փառքը յերբեք չի հանդչելու—
Այդ դուր յես, այդ դուր, իմ թանկադին,
Այդ դուր յես, հայրենիք իմ, դուր:

225
38



Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ



Չորրորդ դասն սկսվեց։ Յերրորդ դասարանի դասատուն չկար, աշակերտները վորոշեցին լուռ նստել դասարանում պատմություններ անել և չխանգարել մյուս դասարաններին։

— Այ, թող Անահիտը պատմի, խնդրեցին յերեխանները։

— Լավ, — ասաց Անահիտը։ Նա դուրս յեկավ, կանգնեց ուսուցչի սեղանի մոտ, գլխի շարժումով մազերը հեռացրեց ճակատից և փայլուն աչքերը բարձրացնելով, սկսեց մեծի նման։

— Այն, ինչ վոր հիմի պիտի պատմեմ ձեզ, կատարված բան ե. ինձ պատմել ե հորեղբայրո։ Նա կարմիր-բանակային հրամանատար ե, նա շա'տ-շա'տ տարի յե, վոր կարմիր բանակումն ե։ Դեռ են ժամանակից, յերբ կարմիրները կովում եյին սպիտակների դեմ։

Յերեխանները լուռմ եյին լուռ և ուշադիր։

— Հա, հորեղբայրս պատմածն ե. հիմի յես կպատմեմ ենպես, ինչպես վոր հորեղբայրս ինքն ե պատմում։

— Քաղաքացիական կոփների ժամանակն եր. մի անդամ, մենք՝ կարմիրներս 120 հոգի ձիավորներ շատ առաջ գնացինք դեպի թշնամին ու մեկ ել հանկարծ տեսանք, վոր սպիտակերը շրջապատել են մեզ մի հովիտի մեջ։ Նրանք մեզանից 5-6 անգամ շատ կլինեյին։

Մենք չվախեցանք, վորովհետեւ տեղերին լավ ծանոթ եյինք, — մեկ ել մեզ հետ եր մեր կարմիր բանակի քաջ հրամանատարներից մեկը։ Մենք բոլորս նրան շատ եյինք սիրում։ Նա լայն ուսերով, գեղեցիկ դեմքով մարդ եր։ Նա մեզնից եր — մեղ հարազատ, մեզ պես ել բանվոր եր յեղել։

Անահիտը քիչ լոեց և ասաց. — Իմ հորեղբայրն ել հանքի բանվոր ե յեղել, նա ենքան լավ ընկեր եր, մեզ հետ եր ուժում, խմում, պառկում մի վրանի տակ, վոնց վոր մեզանից մեկը։

— Նա քաջ և հնարազետ մարդ եր, մենք բոլորս հավատում եյինք, վոր նա մի հնար կդանի և մենք կազատվենք այդ նեղ

տեղից, ու ճիշտ վոր ենպես ել յեղավ։ Մի քանի հոգի հազար-
վեցին ընկեր հրամանատարի մոտ և սկսեցին խորհուրդ անել։

Մեկ ել խոսում ե Ռոտապը և ձեռքը թափ տալիս։ Ռոտապը
ու լրայնացի յեր և ամենաքաջ կովողներից մեկը։ Մի մե՛ծ
հաստ մարդ եր, վոնց վոր մի կազնի ծառ. նա վոչ մի բանից
չեր վախենում և ձիու վրա ենպես եր նպառում, կարծես ինքն ել
ձիու մի մասը լիներ։

Մթնում եր։ Մենք հրամանատարի կարգադրությունը
պատրաստ սպասում եյինք։

Մեր հրամանատարը հանկարծ սուրը հանեց ու գոռաց։

— Իմ յետեի՛ց...

Վոնց վոր հրեղեններ, քշեցինք ձիերը և ձեղքեցինք թշնա-
մու շղթան։ Մեր յետեվից սկսվեց հրացանների ու գնդացիրների
կրակոցը, մենք բլուրի յետեն անցկացանք։

— Բա Ռոտապին սպանեցի՞ն — վշտոտ ասաց Կիմիկը։

— Սպասի ելի, հիմի կասի հորեղբայրս, — բարկացավ Անա-
հիտը։

— Բավական հեռացանք, տեսանք վոր մեզնից պակառում և
Ռոտապը։

Մեկ ել տեսանք բոլորովին ուրիշ կողմից մի ձիավոր քշած
գալիս ե դեպի մեզ. իսկույն ճանաչեցինք — դա Ռոտապի ձին
եր, բայց կարծես քշողը Ռոտապը չեր։ Մոտ վազեցինք՝ տեսանք
Ռոտապն ե, բայց համարյա ուշքը դնացած։ Զիուց իջեցրինք —
տեսանք յերեք վերք կա վրան. յերկուաը սրի, մեկը գնդակի։
Մեր հրամանատարը գումարութելով նրան՝ ասաց.

— Վոչինչ, կապիր։ Վերքերը կապեցինք, հրացաններից
պատզարակ չինեցինք ու Ռոտապին տարանք մեր բանակի հի-
վանդանոցը։ Ռոտապն առողջացավ, բայց աջ ձեռքը փչացավ։
Նա ել կովի չեկավ մեզ հետ։

Եսպես մեր քաջ ու խելոք հրամանատարը փրկեց մեր կյան-
քը։

— Հետո, — աղաղակեցին յերեխանները.

— Հետո, — պատասխանեց Անահիտը, — կեցցե Կարմիր
բանակը։

— Ինչ լավն եր, կեցցե Կարմիր բանակը — աղաղակեցին
յերեխանները։

— Դասը մերջացավ, աշակերտները վատքի կանգնած յեր-
դում եյին Կարմիր բանակի յերդը։

ԴԻԱԿՈՒՐՍԿԱՅԱ Ն.

ԽՆՉՈՒԻ ՄԱՅՐԻԿԻՆ ԳՐԻՇԿԱ ԱՆՎԱՆԵՑԻՆ

Մայրիկս հասակով ինձանից մեծ չեր,
Դիպուկ խփում եր, սակայն, ու քաջ եր։
Յեվ նրան մի ձի ու շինել տվին,
Մայրս միացավ հետախույզ ջոկին։
Չորս որ ե արդեն նրանք չեն քնել,
Քրտնած ձիերից չեն ել վայր իջել,
Յեվ լուսարացին ջոկը մայրիկի
Ռդակել ե ջոկն ըսպիտակների։

Հրամանատարը խորհրդի կանչեց,
Տիուր լուրեր են բոլորը հայտնում։

— Հրացաններ քիչ են, փամփուշտն սպառվեց.
— Հացն ել վերջացավ, դե, ի՞նչ ենք անում։
— Մերոնց հասնելի՞նք. — բայց ի՞նչպես անել.
— Ողակել են մեզ. — պետք ե լիձն անցնել։
— Սառույցը թույլ ե կոտրի հանկարծ։
— Վաղելով կանցնեմ, — մայրիկս ասաց։

Մայրիկս փոքր ե հասակով այնպես,
Հագցրին նրան շորեր տղայի,
Զմուշկներ տվին, սառույցով կանցնես,
Կհարցնեն անունդ՝ ասա. — «Գրիշկա յե»։
Կանցնես լիճն-անտառ։ Այն կողմը-ձորակ՝
Հեծելազորն ե բուղյոննու այնտեղ։
Մերոնց կասնես, կասես համարձակ՝
Փամփուշտներ չունենք, հրացաններ են պետք։

Մթնեց. անցնում ե մայրս սառույցով,
Սառույցն իջնում է, բայց չի կոտրվում:
Մայրս սղղում ե հանդիսու, անվրտով—
Թշնամի չկա-առաջ ե անցնում:

Վաղում ե, վաղում, ու հանկարծ տեսնում—
Սոջեռում ջուր ե տաս թե քսան քայլ:
Ել ի՞նչ մտածել — նա ջուրն ե ընկնում:
Ցուրտ ե, բայց անցնում ե նա անայլայլ:

Սառած վարտիկը կպել ե մարմնին,
Սուր սառույցներով ձեռքն ե կտրատել,
Բայց—ահա քարեր, նա մոտ ե ափին,
Թեկուղ վոտքերն են տիղմի մեջ թաղվել:

Հանում ե չորերն—այսպես թեթև ե,
Հեշտ ե շարժվելը, սապոդը սակայն
Թրջվել, ուսել ու չմուշկի հետ
Հանվում ե նաև թաց սապոդը այն:

Ափ յելավ: «Կանդնիր», — մի ձայն ահավոր
Լովեց: Աջ կողմից մի ձի աժդահա
Առաջ ե գալիս, մեջքին՝ ձիավոր.
«Ա, Գրիշա, կյանքիոդ վերջն յելավ ահա»:

Վոսկե ուսադիր, արծաթե զարդեր,
Թավ բեխերից վեր՝ քիթը սմապտով,
Ծանր նազանն ե իր կողքից կախել...
Ի՞նչ անել... պետք ե ազատվել շուտով:—

Պինդ սեղմեց ձեռքում չմուշկն յելկաթյա,
Ինչքան ուժ ուներ շպրտեց դեմքին,
Դիսպուկ եր հարվածն ու կպավ ահա
Լկտի թշնամու—սպայի քունքին:

Դե չմուշկը վողջ յերկաթից ձուլված,
Մայրիկիս ձեռքն ել ուժեղ ե, թափով,
Ինչպես խելազար՝ ցնցվեց ծառս յելած
Զին-իսկ մայրիկս փախավ ապահով:

Յերբ ուշքի յեկավ սպան, գոռաց — «բռնի՛ր,
Խվեք եղ աղին, սատանի ճուտին».
Իսկ Գրիշան ուղիղ անտառն ե կտրում,
Զյումի թմբերով գայլի պես ցատկում:

Անցավ անտառը: Չորակն ե, գետակ:
Բանտկայիններն են առաջ շարժվում:
Մայրս կորչըել ե կոչիկ ու գլխարկ,
Զեռքերից չանդռած — արյուն ե կաթում:

Իսկույն կապեցին նրա վերքերը,
Իսկ յերբ լսեցին դեպքերի մասին,
Չոկապետն ասաց՝ «Բժամբեք ձիերը»—
Ու արշավեցին անտառ՝ միասին:

Հեծելապունդը մեր՝ փոթորիկի պես
Անցավ, հարվածեց անարդ թշնամուն.
Ուրախ են մերոնք, ցնծում են այնպես—
Գրիշկա — այսպես ել մնաց մորս անունը:

Թարգմ. Մ. Գուրգարյան

ՅՅԵՍՈՒԽԹՅՈՒՆ, ՌԵՎԱ

Այսոր յես հրաժեշտ եմ տալիս իմ «ԾԵԿԱ»-ին: Նա զնում է սահմանը, Հեռավոր Արևելք: Յես շատ եմ սիրում շերբն և իմ «ԾԵԿԱ»ին ել յես շատ եմ սիրել: Բայց յերբ նա մեծացավ, մեծ և ուժեղ գարձավ, յես վորոշեցի բաժանվել նրանից:

«ԾԵԿԱ»-ին ինձ մոտ վերցրի, յերբ նա բալորովին փոքրիկ լակոտ եր: Նա շատ եր մտերմացել ինձ հետ: Առավոտը նա վեր ե կենում, իսկ յես վեռ քնած եմ: Նա իմ մահմակալի շուրջը քայլում ե, քայլում, հետո չի համբերում ու ձայն և տալիս: Դրանից հետո սկսում ե քաշել իմ վերմակը: Այսուղ արդեն ուղես-չուզես զարթնում ես:

Մի անգամ յես տնից մի քանի որով զնացել եյի: Մայրիկ հետո պատմում եր, վոր «ԾԵԿԱ»-ը, ինչպես միշտ, մոտենում եր իմ անկողնին ու տեսնելով, վոր յես չկամ, սկսում եր վոռ-նալ:

Մի անգամ քիչ եր մնացել ինձնից տանելին իմ «ԾԵԿԱ»-ին: Ինչ-վոր մարդ մեքենայով անցնում է մեր տան մոտով, նկատում է «ԾԵԿԱ»-ին, վորը նրան ըստ յերեսութիւն վուր և գոլիս և հենց են ե՝ նստեցրել ելին շոփերի կարինում ու տանում ելին: Յեւտանը նոտած վոչինչ չգիտելի, բայց հանկարծ յերեխաւ-ները պատուհանից բղավում են. «Եմա, փրկիր քո «ԾԵԿԱ»-ին: Յես սլացա զեպի ավտոմեքենան, տեսնեմ «ԾԵԿԱ» կանգնած և հետեի թաթերի վրա, ճանկուում ե կարինի ապակին ու վոռ-նում: Լավ եր վոր ինձ զգուշացրին, թե և այլես շղիտի տես-նելի իմ շանը:

Յերբ «ԾԵԿԱ» մեծացավ, յես սկսեցի նրան սովորեցնել: Յես սովորեցրի նրան ձայն արձակել իմ ազգանշանի գեղջում ու լսել իմ հրամանները: Որինակ՝ գաթայի մի կտոր զնում եմ նրա դնչի մոտ և ասում: «Տուրո», իսկ ինքս հեռանում սենյակից: «ԾԵԿԱ» պատվում ե քաղցր պատառի շուրջը, լիզում քերանի չորս կողմը, վնդստում, բայց չի կպչում, մինչեւ յես չեմ զալիս ու չեմ ասում, վոր կարելի յե ուտել: Կամ թե չե ուղղակի

քթին եմ զնում մի կտոր միս, նա նստում ե առանց շարժվելու, քանի չի լսել իմ բերանից՝ «կարելի յե»:

«ԾԵԿԱ»-ը չի սիրում կոպիտ վերաբերմունք: Փաղաքշանքով կարելի յե նրան ամեն ինչ անել տալ, բայց բավական ե նրան խփեցիր, նա կհամառի և վոչ մի գեղջում չի կատարի քո կար-զադրությունը, յեթե անգամ կիսամեռ անելու չափ ծեծես: Իմ կարծիքով, գա շատ լավ հատկություն ե:

Շատ եմ ափսոսում բաժանվել «ԾԵԿԱ»-ից, մանավանդ այժմ, յերբ նա այդքան մեծացել, ուժեղացել ու խելացի յե դարձել:

Յես նախ քան ընկեր Յեժովին նամակ գրելը յերկար մտա-ծում եյի՝ գրել թե՛ չպրել: Հետո վորոշեցի. այնուամենայնիվ պիտի գրել, պետք ե բաժանվել «ԾԵԿԱ»-ից. նա սահմանում ա-վելի մեծ ոգուտ կրերի, քան ինձ մոտ: Յեվ յես գրեցի.

... «ԾԵԿԱ Յեժով! Յես մի շուն եմ մեծացրել: Խնդրաւմ եմ, նրան վերցնել սահմանի համար: Թող նա ոգնի պանծալի սահ-մանապահներին մեր յերկիրը թշնամիներից պաշտպանելու ժո-մանակ»:

Վորոշ ժամանակից հետո ինձ մոտ մի հանձնաժողով յե-կավ: Նա ստուգում ե շանը, նայում ատամներին, վաներին ու արձանադրություն կազմում. «ԾԵԿԱ» մականունվ շունը նոր-մալ հասակի յե և լավ պահված ու կերակրված: Ակտիվ ե ու համարձակ: Սահմանապահ ծառայության համար պետքական ե»:

Յեվ այսպիս, «ԾԵԿԱ» մեկնում ե: Նա կզնա սահման: Գուցե պատահի, վոր մենք զեռ հանդիպենք: Կճանաչի՞ իտ ինձ:

Յես ու քույրս վորոշել ենք «ԾԵԿԱ»-ի փոխարեն՝ մի ուրիշ շուն պահել: Յես ամեն կերպ կաշխատեմ նրան ևս այնպես զա-տիարակել, ինչպես «ԾԵԿԱ»-ին:

Եմմա Գոլգոտիկայա

Դ.Ա. Գ.Ա.Դ.Ի.Ե

Գ Ո Ր Շ Ը

Մի պայծառ ցուրտ գիշեր յես ձիով ըլջում եյի սահմանա-յին պոստերը: Լուս եր ստհմանում: Միայն ձյունն եր ճոճոռում գորշի սմբակների տակ, և հարևան անտառում զնդալով ցրտից ճաքում եյին չոր սոճիները:

Հանկարծ Գորշը կանգ առավ: Ականջները որեց և ոտո-նապալից խոխոաց: Յես հետ նայեցի: Մոտակայքում վոչ վոք չիար: «Յերեւի մոտերքում գալ և թափառում», վորոշեցի յես

և շարժեցի ձիուս սանձափոկերը: Բայց Գորշը չգնաց ծանապարհով, այլ թեքվեց աջ, ուղիղ դեպի դաշտ: Վորոսորդական շան պես, նա ձգեց վիզը, և զգուց, դադտագողի առաջ գնաց:

Հանկարծ Գորշը քարացավ տեղում: Նույն այդ բոպեյին ձիու առաջ դուրս թռավ մի մարդ սպիտակ քողարկման խալաթը հազին և դահուկները քշելով փախավ մեղանից:

«Լրտես ե»— ուղում ե փախչել, անցնել սահմանը,— մտածեցի յես և բարձրացրի ատրճանակս:

— Կանզնի՛ր, կկրակեմ:

Դահուկալորը չկանզնեց: Փայտերն արագ շարժելով, նա թռչում եր ուղիղ դեպի անտառ:

Ես դեռ սանձափոկերը չեյի շարժել, յերբ Գորշն ինքն առաջ մղվեց և թուչքներով սլացավ դահուկավորի յետևից:

Դահուկալորը թեքվեց ձախ — Գորշն ել թեքվեց ձախ: Դահուկավորը թեքվեց անտառ — Գորշն ել նետվեց անտառ: Անտառում դահուկավորի վազքը մեղմացավ, — այստեղ ձյունը փխրուն եր, բարձր կռւյտերով:

Գորշը հասնում եր փախչողին:

— Կանզնի՛ր, — նորից գոռացի յես և արդեն պատրաստվում եյի թռչել կետին:

Բայց այստեղ Գորշը դահուկավորի հետևից հանկարծակիւրեն շուռ յեկավ և յես դուրս թռա թամբից:


«Վերջացավ — մտածեցի յես, — լրտեսին ձեռքից բաց թողի»:

Բայց յերբ վեր թռու և շուրջո նայեցիւ — տեսնեմ իմ Գորշը կանզնած և ինձանից մի քանի քայլ հեռու: Նրա կողքին ձյան մեջ թպրտում և հալից ընկած դահուկավորը: Հենց վոր նա փորձում և վեր կենալ, — Գորշը ճակատով հրում ե նրան, և դահուկավորն ելի թափալում ե խոր ձյան մեջ: Ես դահուկավորին բերի ուղեփակ: Նա իրոք վոր լրտես դուրս յեկավ:

Այ թե ինչպիսին եր իմ ձին: Այդ ժամանակվանից յես և Գորշը յերբեք չենք բաժանվում: Միասին պահպանում ենք իորհրդային սահմանները:

Յերբ անցած ամառ ինձ փոխադրում եյին ուրիշ ուղեփակ, հրամանի մեջ գրված եր. «Բգկի-ի ավագ տեղակալ Վասիլյեվը շարային ձիու հետ № 3 ուղեփակից տեղափոխվում ե № 4 ուղեփակ»:

Թարգմ. Զ. Անհմյան



ԱՇՈՏ ՇԱՅԲՈՒ

ՀԵՐՈՍՆԵՐ

(Նվեր Խորերդային Միուրյան հերոսներ՝ Զկալովին, Բայդուկովին և Բելյակովին)

Անհայտ բեվեռով,
Սառուցով անձայր,
Գողպատ թերով
Չափ տվին անցան:

Թռան յերկնքով՝
Բեվեռով անցան,
Նրանք յերեքով
Հերոսներ դարձան:

Առաջին անգամ
Գտան նոր ուղի,
Յեկ Ամերիկա
Սլացան ուղիղ:

Զեռք բերին նրանք
Քաջի համարում,
Այդպիսի յեռյակ
Զկար աշխարհում:

... Թող ապրեն հիմի
Փառքից անբաժան,
Մեծ Մտալինի
Գովքին են արժան...

Քարե պատը բաժանում եր գործարանի մեծ շենքը կող-
քի բնակելի տնից: Պատի մեջ դարպաս կար:

Այդ շենքում բանվորներ եյին ապրում: Վորպեսզի մի
քանի փողոց չպատճեն, վորոնք բաժանում են տունը գործարա-
նի մուտքից, բանվորներն այդ դարպասով եյին ացնում:

Դարպասի մոտ միշտ կանգնած եր լինում ժամապահ,
Հրացանը ձեռքին:

Տան բակում, փոքրիկ հրապարակի վրա, պատի մոտ, հա-
վաքվել եյին բազմաթիվ բնակարանների փոքրիկ ապրողները:
Նրանք այստեղ վոլեյբոլ եյին խաղում և թուզում դժած «զա-
ռարաններով»:

Բակում խաղացող յերեխանները ժամապահի հետ մեծ բա-
րեկամություն եյին հաստատել: Նրանք գիտեյին, վոր նբան
հանձնարարված ե գործարանի պահպանությունը և քանի նա
կանգնած ե պահակատեղում, հետը խռուել չի կարելի: Բայց
յերբեմն, վոլեյբոլ խաղալիս, չափազանց բարձր գցած գնդա-
կը, քարե պատի վրայից թուզում եր գործարանի բակը: Յեվ
այն ժամանակ ժամապահը հանդիմանարար դրուիր թափա-
հարելով, առում եր.

— Դև հայոց, գնացեք գնդակի յետեից և մի ակնթարթից
վերադարձեք:

Խաղացողների վորուե մեկը նետի նման ոլանում եր դար-
պասով և մի բռպեյից հետո գնդակը ձեռքին հրապարակին եր
վերադառնում:

Աշնան մի տաք որ եր:

Դպրոցից տուն գալով, յերեխանները դուրս թափվեցին
բակը: Տասը տարեկան Սվետլանան վազվզում ու խողում եր
մյուսների հետ միասին: Նա թոչկուտելով վազում եր գնդակի
յետեից: Հետո սկսեցին պահմառոցիկ խաղալ: Այդ խաղը
Սվետլանան բոլոր խաղերից շատ եր սիրում: Նա միշտ այնպի-
սի տեղ եր թագնվում, վոր յերբեք չեր կարելի դտնել:

Զախ կողմից, պատի մոտ գտնվում եր մի դուռ: Սանդուխ-
քով կարելի յեր իջնել խոնավ ու մութ նկուղը:

Մե՛կ, յերկո՞ւ, յերե՞ք, և Սվետլանան արագ դեպի այդ
դուռը վազեց և աստիճաններով իջավ:

Վորքա՞ն ցուրտ ե, խոնավ:

Բայց այս ո՞վ ե: Այստեղ մարդ կա:

Սանդուխքի ստորին աստիճանի վրա մի պառավ ե նըս-
տած: Դեմքը կնծուտ ե, գլուխը թաշկինակով փաթաթված:

— Բալի՞կս, սիրելիս, — ասաց պառավը, — զու խաղում
ես ու վազվզում, իսկ յես պառավ եմ, յեկա, վոր վորդուս
տեսնեմ, իսկ նա չկա, բնակարանը փակ ե: Յես ել նստել
հանգստանում եմ, սպասում եմ, վոր գա...

Սվետլանան ուշադրությամբ դիտեց պառավին: Պառավի
տեսքը նրան չվախեցրեց: Միայն հետաքրքրվեց, թե ինչո՞-
պառավը հանգստանալու համար նկուղն ե իջել, վորտեղ այն-
քան ցուրտ ե, խոնավ, կեղատոտ: Ինչո՞ւ նա բակը չի գնում:
Փողոցը չի գնում, վորտեղ տաք ե և ուրախ:

Յերեվաց, վոր պառավը բարի յե ու խոսել սիրող: Նա
գրալանից հանեց և Սվետլանային մեկնեց մի կանֆետ, այն ել
ի՞նչ կանֆետ — «Միշկա», կանֆետ, վոր Սվետլանան շատ եր
սիրում:

Դրանից հետո պառավը վեր կացավ: Նա փոքրահասակ
եր, սև շոր հաղած: Նրա մատները շարունակ դողդոգում
եյին:

Նա մոտեցավ աղջկան և սկսեց գլուխը շոյել:

— Բալիկս, փոքրիկս: Ես ձեր տան կողքի տունն ի՞նչ տուն
ե, — հարցրեց պառավը:

Սվետլանան զարմացավ. այդ ինչո՞ս ե, վոր այս պառա-
վը չգիտե, վոր դա գործարան ե: Յեվ շտապեց բացատրել,
վոր դա գործարան ե:

— Իսկ այն ի՞նչ հօրեղբայր ե, վոր կանգնած ե դարպասի
մոտ հրացանը ձեռքին:

— Ժամապահ ե, գործարանն ե պահպանում:

— Յեվ վոչ վոքին չի՞ թողնում, վոր այնտեղ դնա:

Սվետլանան պարծեցավ.

— Ինձ թողնում ե:

— Մի՞թե կարելի յե, — ժպտաց պառավը:

— Այո՛, թողնում ե:

— Դա թողնի յել, ներսում կանգնողը չի թողնի: Նա քեզ
կաեսնի ե գուրս կանի:

— Զի՞ տեսնի: Հեռու յե կանգնած, մյուս պատի մոտ:
— Բակում բացի նրանից ուրիշ մարդ չկա՞:

Սվետլանան ուղարկ եր պատաժիանել, վոր չկա, բայց չա-
ռաց:

Նա հիշեց, վոր հայրիկն ասել ե, դպրոցում ել նախազ-
դուշացրել են, վոր շաղակատություն չպետք ե անել, վոր
ոտար մարդանց հետ խոսելիս պետք ե զգույշ լինել:

Քիչ մնաց, վոր Սվետլանան ըաց լինի: Ինչքա՞ն շտա խո-
ռեց պառավի հետ...

— Տատի ջան, դու այստեղ սպասիր, յես խոկույն կղամ, —
ասաց աղջիկը և սանդուխքներով արագ վեր բարձրացավ:

Հուզմունքից, դողդողջուն ձայնով նա պատեց յերեխա-
ներին պառավի հետ հանդիպելու մասին և ցույց տվեց «Միշ-
կա» կանֆետը:

Յերեխաներն ուշադրությամբ լսում եյին նրան:

— Ամա շատախոսն ես Հա՛, — ասաց նրանցից մեկը:

— Սպասի՛ր: Դու, Սվետլանա, նկուղը վազիր, իրրե թե
պահմառցիկ ես խաղում, իսկ յես կղնամ, կողատմեմ հորս, —
ասաց Վոլոդիան ու վազեց:

Քիչ հետո սանդուխքներից բարձրացավ պառավիր: Դար-
պասի մոտ նրան բռնեցին:

Պարզվեց, վոր այդ պառավը հակահեղափոխական լրտե-
սական կազմակերպության անդամ ե: Այդ կազմակերպությու-
նը վորոշեցնել գործարանը և պառավին ուղարկել
ե տեղեկություններ հավաքելու...

Սակայն յերեխաների զգոնությունը խանգարեց նրանց
կատարելու իրենց սև գործը և ոգնեց բռնելու և մերկացնելու
անարդ թշնամիներին:

ՄՈԼԻ ՀՈՂԱՑՈՂԸ

Ողոստոսին եր, յերեկոյան ժամը վեցին:

Որերը բավական ցուրտ եյին, մառախուղոտ, մաղում եր
տաղտկալի մանր անձրեւ:

Լեհական ափին մոտեցավ ինչ վոր մի մարդ քաղաքացիա-
կան հագուստով:

Շուրջն ափին վոչ վոք չկա: Խոնավ ե, ցուրտ: Մարդն
սկսեց զանդաղ հանվել: Մի՞թե նա կլողանա այս յեղանակին:

Հեեց այդպես ե վոր կա՝ նա հանեց վրայից հաղուստը,
հոգատար կերպով ծալեց դրեց մի ռեզինե տոպբակի մեջ:

Ապա սկսեց ուժգնորեն ինչ վոր յուղ քուլ մարմնին — մի մի-
ջոց ցրտի դեմ:

Դրանից հետո թափով գնաց յեկազ ու շըմք — ջրի մեջ:
Յերկար լողանում եր նա՝ լողում եր, չփչփացնում, սուզվում
ջրի տակ: Յերեվում եր լողանալուց նա մեծ բավականություն
եր ստանում: Զարմանալի առողջություն ունի այդ մարդը,
նախանձել կարելի յե:

Յեթե այդ ժամանակ մեկն ուշադրությամբ դիտելու լիներ
լողացողին, նա կարող եր նկատել, վոր լողացողն ամբողջ ժա-
մանակ ուշի ուշով նայում ե իր դիմացի, խորհրդային ափին:
Սուզվում ե ջրի տակ, դուրս ե գալիս ջրի յերեսն ու նայում:
Հատ հետաքրքիր մարդ ե...

Այդ հետաքրքիր մարդը կես ժամի չտփ մնաց՝ ջրի մեջ:
Ապա լողաց դեպի իրենց ափը, վեցը լուսինե տոպրակն իր
հաղուստով և ընկղմվեց ջրի մեջ:

Ջրից դուրս յեկավ նա խորհրդային ափի մոտ: Հետո Հա-
նեց հագուստը տոպրակից ու սկսեց հագնել:

Հաղնվեց, հանեց գրպանից ատրճանակը, նայեց, նորէց
դրեց գրպանը և գնաց:

Գնում ե և անընդհատ ջղայնանում: Կանգ ե առնում, յետ
ե նայում, ականջ ե զնում: Արգեն բոլորովին մթնել ե, վո-
չինչ չի յերեսում, իսկ վայրն անծանոթ վայր ե:

Այդ մոլի լողացողի յետեվից առանց աղմուկ հանելու
սողում եր փորի վրա սահմանապահ կոմյերիտական Ալեքսեյ
Սեմիկովը:

Սեմիկովն արդեն վաղուց դիտում եր այդ մարդուն և
տեսավ, թե ինչպես հանվեց, ինչպես եր լողանում և այն:

Հիմա նա սողում եր նրա հետեւից ու մտածում:

«Պետք ե առանց կրակելու բռնել նրան: Բայց առաջ թող
նա դադարի ջղայնանալուց, թող հանդստանա և իրեն զգա
ինչպես տանը, իսկ հետո...»

Սահմանը խախտողը քանի զնում, ավելի քիչ եր յետ նա-
յում: Նա սկսեց ավելի վստահ քայլել:

Վերջապես նա բոլորովին հանդստացավ: Դա նկատվում
եր նրա քայլվածքից:

«Հիմա արդեն կարելի յե սկսել» — վորոշում ե Սեմի-
կովը:

Նա սողալով բոլորովին մոտենում ե նրան, վեր ե թուզո, և
տեղից ու սուր, ականջ ծակող աղաղակ ե բարձրացնում.

— Ա—ո—ու—ե—ի—յո:

Խախտողը պատրաստ եր լսելու հրաձգություն, աղաղակ-
նեք՝ «կանզնիր», «ձեռքերդ վեր», «պառկիր»:

Բայց նա բոլորովին նախապատրաստված չեր այդպիսի
սիրտ կտրատող աղաղակի.

— Ա—ո—ու—ե—ի—յա:

Նա քիչ մնաց խանար, կարծես կողքին նոնակ տրաքեց:
Նա բոլորովին կորցրեց իրեն:

Սեմիկովին ել հենց այդ եր պետք: Մոտ վազեց և, ժամա-
նակ շտալով նրան ուշքի գալու, գցեց գետին ու սվինը զեմ
տրեց կրծքին:

Ճանապարհին դեպի ուղեկալ գնալիս լողացողն ամբողջ
ժամանակ լուս եր, բայց մի անդամ չուռ յեկավ դեպի սահմա-
նազահն ու ասաց.

— Կյանքումս եսպիսի աղաղակ չելի լսել: Լավ մասնա-
դեան եք յեղել:

Սեմիկովը պարտք չմնաց նրան և կոմպլիմենտին պատաս-
խանեց կոմպլիմենտով:

— Իսկ դուք շատ ճարպիկ լողանում եք:

— Հա, յես եսոր հաջող կերպով լողացա, — մռայլ փընթ-
փընթաց լողացողը:

«Պիոներ Կանչից»

Գ. Աննիսի

ՊԱՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

(Մի հատված «Յերկու շբանշան» պոեմից)

Աղատ ենք, նվիրված մեր յերկրին,
Պարիսպ ենք ու զըրահ նրա համար,
Ու խիստ ենք ու անանց թշնամու
Նենդամիտ դավերի համար:

Թշնամին թե դառնա հուրկրակ,
Ամպ դարձած ջրհեղեղ կտեղանք.
Ամպ դառնա, — մրրիկի պես արագ
Մի հեքով յերկնքից կվանենք:

Հողմ դառնալ թե փորձի թշնամին,
Պահակ ենք մեր յերկրին, յերկնքին,
Պողպատյա ձույլ պատնեշ կկաղմէնք
Մեր անծայր հողերի յեղերքին:

Թարդմ. Ա. Ա.

Միշտ վեր, դեպի վեր և առաջ,
Թուչում ենք ճամբով անճանաչ:
Հաղթող ողաչուն վախ չունի,
Նման սավառնող թուչունի:

Մեզ հետ համաշափի՝ վերելում,
Արեվն է թուչում անդադրում,
Լուսինն է փայլում գիշերով,
Շողում արծաթե վեշերով:
Ամպեր, փոթորիկ ու մշուշ,
Պատռում ե, անցնում ե զգուշ:

Մաղկող մեր յերկիրը ջահել
Մեզ խինդ ու յեռանդ ե տվել.
Տվածը բենզին չե միայն,
Այլ կամքն է յերկիրի անսասան:
Տաք սիրտն է խփում մոտոռի,
Նման մեծ սրտին մեր յերկիրի:

Լսում ենք ինչպես ներքելում
Մեր շող հայրենիքն է յերգում:
Տեսնում ենք աչքեր բյուրալոր,
Վոր մեզ են նայում պարծանքով,
Ու մենք ամպերից դեպ ներքեվ,
Հղում ենք յերմագին բարեվ:

Յերկնի կապույտումը անափ
Մեր նավն է սուրում համարձակ.
Գտնում ենք նոր նոր ուղիներ,
Անցնում ենք ովկյան ու բեվեռ.
Յերկինքը՝ առած մեր թելին՝
Նվեր ենք բերում յերկիրն:

Միշտ վեր, դեպի վեր և առաջ,
Թուչում ենք ճամբով անճանաչ:
Հաղթող ողաչուն վախ չունի,
Նման սավառնող թուչունի:

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆԻ

ԼԵՆԻՆԸ ՄԵԾ

(Խորհրդային հայկական Փոլկլորից)

1.

Զանս քեզ ջան,
Բատրակ լեշան,
Քո կիսամաշ, են ծանը ու մեծ,
Յոթ կարկատան փափախի տեղ,
Կեպիդ այդ նոր ու փառահեղ
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց,
— իմ կիսամաշ, յոթ կարկատան փափախի
տեղ,
Կեպիս այս նոր ու փառահեղ,
Ինձ պարզեվեց
ԼԵՆԻՆԸ ՄԵԾ:

2.

Զանս քեզ ջան,
Բատրակ լեշան,
Քո չուլ-փալաս արխալղի տեղ
Կոստյումը քո այդքան շքեղ,
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— իմ չուլ-փալաս արխալղի տեղ,
Կոստյումը իմ այսքան շքեղ
Ինձ պարզեվեց լենինը մեծ:

Զանս քեզ ջան,
Բատրակ լիեչան,
Քո ծվատված արայի տեղ
Վերարկուն քո մահուդ շքեղ,
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ ծվատված արայի տեղ,
Վերարկուն իմ մահուդ շքեղ
Ինձ պարզեվեց Լենինը Մեծ:

Զանս քեզ ջան,
Բատրակ լիեչան,
Քո լալկված, խեղճ լեղվի տեղ
Այդ հուրհուրան, թրի նման
Կտրուկ լեղուդ, սուր ու հնչեղ,
Քեզ ո՞վ տվեց, քեզ ո՞վ տվեց:
— Իմ հուրհրան, թրի նման,
Կտրուկ ու սուր,
Ճարտար լեղուն,
Ինձ պարզեվեց Լենինը Մեծ:

Զանս քեզ ջան,
Բատրակ լիեչան,
Խուլ ու խարխուլ հոլիկի տեղ
Սենյակդ ճոխ, կոկ ու լուսեղ,
Արեվով լի, արեվակեղ,
Քեզ ո՞վ տվեց, ո՞վ տվեց քեզ:
— Իմ անարկ հոլիկի տեղ,
Սենյակս կոկ, ճոխ ու լուսեղ,
Ինձ պարզեվեց Լենինը Մեծ:

Զանս քեզ ջան,
Բատրակ լիեչան,
Դաժան կյանքի գորշ հատակից,
Բիրտ տերերի ծեծի տակից,
Աւրախ կյանքի պայծառ հանդես,
Ո՞վ հանեց քեզ, ո՞վ հանեց քեզ:
— Դաժան կյանքի գորշ հատակից,
Բիրտ տերերի ծեծի տակից,
Ինձ ճոխ կյանքի հանդես կանչեց
Լենինը Մեծ, Լենինը Մեծ:
Յեվ մենք հիմա կյանքով աղատ,
Մեր աշխարհում այս լուսազարդ
Մեծ Լենինի ջինջ փարոսով,
Ատալինյան մոքի լուսով,
Սիրով, հույզով, կյանքով լիքը,
Աերտում ենք մեր վառ գալիքը:

ՎԵՐՏՆԵՆՔ ՀՐԱՅԱՆՆԵՐԸ ՆՈՐ

Սվինները դրոշիկներով՝
Վերցնենք հրացանները նոր։
Տեղ աշխույժ յերգելով՝ դեպի հրաձդային։
Խմբակները գնանք այսոր։
Մե՛կ, յերկո՛ւ,
Չա՛խ, ա՛ջ,
Բոլորը շարքի՛:
Առա՛ջ,
Զոկա՛տ:
Յերբ
պատերազմ-մբրիկն
ոկոի նորից՝
պետք ե իմանանք ճիշտ նշան խփել
և լավ կրակել։
Քայլի՛ք
կտրո՛ւկ.
նշան՝
հատո՛ւ:
Իսկ յեթե շարժի յերկիրն իմ՝
Բանակները իր—
Սանիտարներ կլիննեք մենք
Բոլոր մարտերում։
Սնտառում
Ընկած վիրավորին
Մերոնց մոտ կտանեմ՝
Դրած պատգարակին։
Անշուկ հետախուզելով՝
Զգույշ քայլելով՝
Քարերի յետեից,
Ճյուղերի արանքից.

Կդտնենք թշնամուն դիտակով։
Սողում եմ յես ահա
Գիշեր,
ցերեկ—
Մերոնց
ոգնելու համար։
Կարմիր դրոշիկներով՝
Փայլում են հրացանները նոր։
Գնում ենք յերգելով՝
դեպի հրաձդային։
Խմբակներն աշխուժով։
Մե՛կ,
յերկո՛ւ:
Շարքով՝
Քայլի՛ք
Զոկա՛տ։
[REDACTED]

Բ. ԺԻՏԿՈՎ, Բ. Ի. ԻՎԱՆՏԵՐ, Ա. ՆԵԿՐԱՍՈՎ, Բ. ՇԱՏԻԼՈՎ,
ԲԱՆՏԻ ԺՈՒՌՆԱԼԸ

(«Պատմվածքներ ընկեր Կիրովի մասին» գրքից)

Կոստիկովը*), Շպիլովը և Գոպովը մնացին բանտում յոթ ամիս։ Նրանց հաճախակի քարչ եյին տալիս ժանդարմական վարչություն և տաղտկալիորեն հարցաքննում, թե վո՞րտեղ է տպարանը։

Բայց նրանք պատասխանում եյին, վոր վոչ մի տպարան չգիտեն և յերբեք այդ գործով չեն զբաղվել։

Ընկերները չեն մատում։ Նրանք նույնիսկ բանտում հնար գտան գաղտնի տպարան կազմակերպելու և տպադրելու «Բանտ» ամսագիրը։

Այդ ի՞նչպես հաջողվեց նրանց։

Բանտում կար գեղատուն, կար և ատամնաբուժ, վորը համակրանքով եր վերաբերվում դեպի հեղափոխությունը։

Հենց այդ բժշկի միջոցով անընկճելի կալանավորները ձեռք բերին ժելատին, զելիցերին և այլ պարագաներ։ Դեղատանը սպիտայրոցի վրա խառնուրդ յեփեցին հեկտոգրաֆի համար, այդ հեկտոգրաֆով ել տպագրեցին ժուռնալը, վորտեղ կային հոգվածներ, ֆելետոններ և բանտային լուրեր։

Ամսագիրը քրեականների միջոցով ուղարկվում եր քաղաք, լույս աշխարհ։

Տոմսի համալսարանի ուսանողները, ստանալով այդ ամսագիրը, վորոշեցին վաճառել քաղաքական ձերբակալվածների ոգտին։ Իսկ համալսարանում այդ ժամանակ սովորում եր վոչ վորպես իսկական ուսանող, այլ վորպես ազատ ունկընդիր, — բանտապետի ողնականը։ Նա մի անդամ, առանց վորևե կասկածանքի, զնեց մի ամսագիր և քարացած մնաց։

Այս ի՞նչ ե։ Իրենց մոտ բանտում տպադրվում է դավադրական ամսագիր։

*.) Ս. Մ. Կիրով։ (1906 թվին Տոմսի օպերատում դադտնի տպարան կազմակերպելու պատճառով բանտարկված եր ընկ. Կիրովն ընկերների հետ)։

Նա ամսագիրը կոխեց գրպանը, վաղեց բանտապետի մոտ և զեկուցեց նրան այդ մասին։

Այդ նույն գիշերը քաղաքական ձերբակալվածների խուցերը մտավ պետը մի խումբ հսկիչների հետ։

— Վո՞րտեղ ե ձեր հեկտոգրաֆը։

— Ի՞նչ հեկտոգրաֆ։

— Ի-ի՞նչ... Իսկ ինչո՞վ եք դուք տպադրում ահա այս գարշելի թերթուկը։ — զոռում եր պետը, թափահարելով բանտային ամսագիրը։

Ընդհատակյա հրատարակիչները լուսամ եյին և քթի տակ ծիծաղում։

Սկսվեց խուզարկությունը։ Բոլոր կալանավորներին միայն սպիտակեղենով քշեցին բարաք։ Խուցերում թափ տվին բոլոր ներքնակները, բարձերը։ Ման յեկան ամեն ծակ ու ծուկ և վոչինչ չդտան։

Իսկ հեկտոգրաֆը և ամսագրերը պահված եյին աբտաքնացում։ Այնտեղ կար վառարան։ «Հրմտարակիչները» հենց ուսատաղի տակից հանելով աղյուսներ, բացված անցքի մեջ խցկում եյին հեկտոգրաֆը և թուղթը, հետո աղյուսները տեղն եյին գնում և շուրջը կավիճով չփում, հավասարեցնում։

Կալանավորները շատ եյին կարդում, պարապում եյին խմբակներում, յերգեր եյին յերգում, իսկ յերբ խուցն իր փայտողիներով և պարաչայի*). գարշահոտությամբ զզվեցնում եր սիրտ խառնելու աստիճան, նրանք յերեմն գնում եյին յեկեղեցի, վորպեսզի վոտքերը քիչ բացվեն, կամացուկ խոսակցեն մյուս խուցերի ընկերների հետ և քրեականների միջոցով գրություն ուղարկեն ազատ ընկերներին։

Մի անգամ կոստրիկովը, Շպիլովը և Պոպովը ուրիշ քաղաքական բանտարկյալների հետ հսկիչների ուղեկցությամբ գնացին յեկեղեցի։ Յեկան, զույգերով կանգնեցին վոչ հեռու անուշահոտ յուղերով ոծված տիկիններից՝ բանտային իշխանավորների կանանցից, վորոնք բաժանված եյին կալանավորներից ցանկով և հսկիչների շղթայով, ու սկսեցին, ըստ սուվորության, փսխուալ։

Լզարուկ տերտերը, լսելով այդ, վորոշեց քարոզ կարգադրական անասովածության մասին։

— Դուք կարծում եք, նրանք յեկել են աստծուն աղոթելու, — զոռում եր նա, ցանցառ մորուքը թափահարելով և

*) Շարժական արտաքնոց, վոր պահվում է կալանավորների խուցում։

մատնացույց անելով ընդհատակյա հեղափոխականներին: — Սրանք անաստվածներ են:

Յեվ հանկարծ յեկեղեցու լոռության մէջ լավեց Սերյոժա Կոստրիկովի հնչեղ ձայնը. «Հրաժարվենք ընկերներ, հին որենք ներից...»

Ծեր բանվոր իվանովը միացավ յերդին իր թագ բամբով. և նրան հետեւցին բոլոր քաղաքական բանտարկյալները, — շարունակեցին «Մարսելյեզան»:

Հսկիչները շվմած այդպիսի հանդպնությունից, վրա վաղեցին և հրելով յեկեղեցուց դուրս հանեցին գավիթ, կանչեցին զինվորական ուղեկից պահակախմբին և նրանց ողնությամբ կալանավորներին տեղավորեցին խուցեցում:

Դրանից հետո անաստվածներին ել յեկեղեցի չեյին թողնում, բայց և լղարուկ տերտերը, Սերյոժա Կոստրիկովից իրատված, ել չեր համարձակվում սև հարյուրակային քարագներ կարդալու:

Յոթ ամսից հետո ժանդարմական վարչությունը այդպես ել չկարողանալով դանել դադունի տպարանը, «ապացույցներ չունենալու պատճառով» ազատեց բանտից Շալիլովին և Պոպովին, իսկ Կոստրիկովին հիշեցրին իր նախկին «զործերը» և գատի տվին: Դատարանը վճռեց Կոստրիկովին բերդում նստենել յերեք տարի ժամանակով, բայց հետո, «Հանցագործի» անչափահասության պատճառով, կրծատեց այդ ժամանակամիջոցը մինչև մեկ տարի և չորս ամիս:

Թարգմ. Զ. Անեմյան

Ֆ Ր Ո Ւ Ն Զ Ե

Այս դեպքի մասին յես լսել եմ ուրիշներից և դեպքի հերոս — ընկեր Ֆրունզեյից: Կարասմեմ այն, այլապես նա կկորչի և ժիգառնա պատճության սեփականություն:

Այդ յեղել ե, ըստ յերեւոյթին, 1921 թվին կամ 1922 թվի սկզբին: Ֆրունզեն Ռւկրաինայի և Ղրիմի զորքերի հրամանատարն եր: Այդ ժամանակ կոխվներ եյին տեղի ունենում Մախնայի և նրա ջոկատների հետ: Կուրակների և գյուղացիության ռանելոր մասի Մախնոյի վերաբերմաբ ունեցած համակրանքը կոխվը դարձնում եր շատ դժվար և յերկարատե:

Ֆրունզեն նախապարաստվեց վճռական գործողություններ Մախնոյի հիմնական ուժերի լիակատար ջախջախման համար և ինքը դուրս յեկավ գործողության վայրը:

Մախնոյի դեմ գործող զորքերի շտապը գտնվում եր Կ. Գյուղում: Այդ գյուղից քանի վերստի վրա յե Մ. շենը, վորտեղ չկար վոչ մեր զորքերից, վոչ Մախնոյի զորքերից: Մախնոյի զորքերը գտնվում եյին հետեւյալ գյուղում:

Պետք եր իմանալ Մ. շենի տրամադրությունը և հակառակորդի գիտավորությունները: Ֆրունզեն հետախուզության դուրս յեկավ ինքը, վերցնելով իր հետ հրամանակատար սպառ յին (արդյունահան) և յերկու պատվիրատարի (որդինարեց):

Պարզ առավլուտ եր: Յերբ Ֆրունզեն ձիով մոտեցավ շենին, հակառակորդի վոչ մի նշույլ չեր յերեսում: Բայց վորքան մեծ յեղավ նրա զարմանքը, յերր, դուրս գալով այդ շենի միակ փողոցը, նա տեսավ այսուղի տեղավորված զորամաս, ընդուրում նա ձին կանդնեցրեց ուղիղ մի խումբ մարդկանց առաջ, վորոնք, նստած տների մոտի հաղաթմբերի վրա, մաքրում եր յին հրացանները, կարգի եյին դցում զնդացիրները:

Յերեսում եր, վոր այդ զորամասը հենց նոր և յեկել շեն և կարծատե հանգստից հետո պատրաստվում ե հարձակման:

Ֆրունզեն հասկացավ, վոր դա մախնովյան զորամասն ե: Փողոցում խոնված մախնովյական զինվորներն ել, վորոնք առաջին պահին վոչինչ չկասկածեցին, գլխի ընկան և զենքի դիմեցին:

— Սլացե՛ք տարբեր կողմեր...

Նա ինքը միանգամից յետ դարձրեց ձին և հետեւ յաղաղակ լուց:

— Դա հո կարմիր հրամանատարն ե...

Յերբ նա շենից դուրս թռավ և հասավ իրեն վոչ այնքան ծանոթ ճանապարհին, չուտով նկատեց հետապնդում: Նրա հետեւից եյին ընկել չորս ձիավոր: Ֆրունզեյի տակի ձին բացուի արշավող ձի յեր: Նա թռչում եր նետի նման: Հույս կար, վոր նրան չեն հասնի: Մակայն նրան հետապնդող մախնովյանների ձիերն ել վատը չեյին:

Մախնովյականներն արշավի ընթացքում սկսեցին կրակել Ֆրունզեյի վրա:

Գնդակները սուրում եյին, բայց Ֆրունզեյի և Մախնովյականների միջև յեղած տարածությունը մեծացավ: Հանկարծ Ֆրունզեն նկատեց, վոր իր ձին վորոշ չափով վազքը նվազեցնում ե, ուշադրությունը լարելով, նա ձիու պարանոցին արյուն տեսավ, զնդակը սահել եր պարանոցի վրայով, առաջուն առաջին զնդակը լիորդ վածք: Արյունը հոսում եր բավականին ջացնելով խորը քերծվածք: Արյունը հոսում եր բավականին առաջատ: Դրությունն արդեն ավելի քիչ նպաստավոր եր դաս-

նում Ֆրունզեյի համար։ Մախնովականները սլանում եյին կատաղի արագությամբ։

Ֆրունզեն շատ լավ հրացանաձիգ եր։ Նա ուսից ցած քաշեց կարարինը, չուռ յեկավ, կրակեց և յերկու կրակոցով ցած գլորեց իրեն հետապնդողներից մեկին։

Հետապնդումը շարունակվում է։ Ֆրունզեյի ձիու ուժերն զգալիորեն թուլանում են։ Նա վորոշեց արագորեն իջնել ձիուց և ուղղակի, անվրեալ խփել համող մախնովականներին։

Այդ մանյովը հաջողվեց։ մինչ նրանք գլխի ընկան, Ֆրունզեն կրակելով յերկուսին՝ ձիերից ցած դցեց։ Այդ ժամանակամիջոցում մնացած յերրորդը նույնպես իջավ ձիուց։ Ֆրունզեն թափ ձիու մեջքին և առաջ մլացավ։ Ձիուց իջած մախնովականը մի քանի անդամ կրակեց և Ֆրունզեն աջ կողքում դդաց ուժեղ այրոց։ Նա վիրավորված եր զնդակով, վորը ծակել անցել եր, բայց չեր կպել վոչ թոքին, վոչ վոսկրին։

Նրան այդ զնդակն ուղարկող մախնովականը թռավ ձիու վրա և ելի միասմանակ շարունակում եր հետապնդել նրան, բայց, մենակ մնալով և, յերսի, չհամարձակվելով մենամարտել Ֆրունզեյի հետ, վերջ ի վերջո յետ մնաց։

Ֆրունզեն դեռ յերկար արշավում եր, բայց, նկատելով իրենից ձախ մի փոքրիկ դետակ, մոտեցավ նրան, ձիուց ցած իջավ, մի կերպ լվաց իր վերքը, լվաց ձիու վերքը և այդ ժամանակ տեսավ հեռվում գետի հակառակ ափին ինչ վոր մեկին, վորը հրացանից իրեն նշան եր բռնում։ Դա մի վայրկյան եր։ Դեռ չեր վորոտացել հրացանը, յերբ Ֆրունզեն, նկատելով գեպի իրեն նշան բռնողի կրծքին կարմիր նշան, կարողացավ ձայն տալ։

— Այդ յե՞ս եմ...

Բանից գնուրս յեկավ, վոր նշան բռնողը պատվերատարներից մեկն եր, վորը Ֆրունզեյին ընդունել եր մախնովականի տեղ։

Պատահմունքն ազատեց Ֆրունզեյին մահից և վիրավորվելուց։ Պատվերատարի հետ միասին Ֆրունզեն յերկար վորոնեց այն գյուղը, վորտեղ տեղավորված եր իրենց շտարը և միայն ուշ գիշերը վերադարձավ յուրայինների մոտ։

Այս գեպքի մասին տեղեկացավ Քաղրյուրոն։ Մի կողմից Ֆրունզեն հայտարեց ամենամեծ անվեհերություն, վճռականություն, հարագիտություն։ Մյուս կողմից, վորտես զորքերի հրամանատար, նա չպետք է ինքը հետախուզության գնար։

Այդ բոլորը նշվեց համապատասխան կերպով։

Թարգմ. Զ. Անեմյան

ՍԻՄՅՈՆՈՎՅԱՆ ԶՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հենց առաջին որերը Սիմյոնովկայի բոլեսիկները, վորոնցից շատերը դեռ նոր եյին վերադարձել բանտից, աքսորից, կազմակերպեցին կարմիր դվարդիական մի ջոկատ։ Հենց վոր գերմանական գնդերը շարժվեցին դեպի Ռազմականա, ջոկատը դուրս յեկալ նրանց դեմ կըռ վի։ Մարտի կեսերին, յերբ ջոկատում մնացել եյին միայն մի քանի տասնյակ մարտիկներ, նա կազմեց մի եշելոն ու վերադարձավ Սիմյոնովկա՝ համարման համար։ Ջոկատի եշելոնը մնաց կայարանի պահեստի ուղիների վրա։ Մի քանի որից հետո Սնովսկուց Սիմյոնովկա յեկավ Շչորսն իր ընկերների հետ։ Նույն որը հավաքվեց Սիմյոնովկայի կուսակցական կազմակերպության ամբողջ ակտիվը։

Յեկավ կազմիր կնետեկը։

Շչորսն արդեն լսել եր նրա մասին։ Շչորսը զարմանքով դիտում եր այդ ամբապինդ, թեթև կոացած մարդուն իր բոցավառ տչքերով, վորը պահպանել եր իր դեմքի առողջ, թուխ գույնը, չնայած դեռ պատանի հասակից տաժանակիր։ աշխատանքի մեջ եր յեղել Սիրիում։

Շչորսը նստել եր մի կողմ, վորտես կողմնակի մարդ և լըստում եր նրանց խոսակցությունը։ Նրա վրա վոչ վոք առանձին ուշադրություն չեր դարձնում։ Հավաքվածների մեծամասնությունը նրանից մեծ եյին։ 23 տարեկան Շչորսը նախկին քաղաքական տաժանակիրների միջև նմանում եր մի պատանու։ Խոստում եյին Սիմյոնովյան ջոկատի ծանր վիճակի մասին։ Ջոկարավականաչափ զենք, սարքավորում, պարեն։ Ջոկատի դրամարկղը զատարի եր։ Կարգապահությունը բոլորովին խախտված եր։ Ժողովում հարցվեց վրաց դրվեց, թե ի՞նչ անել առաջիկայում։ Շչորսը մոաեցավ սեղանին ու ասաց։

— Ընկերներ, յես նախկին պրոպրէչիկ եմ, ճակատային։ Կուսակցությունն ուղարկել ե ինձ ձեզ ողնության։ Խոսակցությունների համար մենք ժամանակ չունենք։ Գերմանացիներն արդեն Գոմելումն են։ Յես առաջարկում եմ...

Բոլորն իսկույն լարեցին ուշադրությունները, կարծես հենց նոր նրանք նկատեցին այդ մարդուն։

Նա առաջարկեց մշակել ներքին կարգի խիստ կանոնները։ «Մարտիկը, վոր գուրս և զալիս կոմից առանց իր հրամանատարի կարգադրության, պնդակահարվում ե, վորտես դավաճան»։

Նրան առարկում եյին. «Շատ խիստ ես, ընկե՛ր»: Իսկ նա պատասխանում եր. «Հեղափոխությունն ե պահանջում այդ»:

Շչորսի առաջարկությունները մի քանիսին թվացին կըտրուել, խիստ, վտանգավոր, անիրազործելի: Սակայն վերջիվերջու մեծամասնությունն ստիպված եր համաձայնվել այդ առաջարկներին:

Զոկատի դրամարկղը լրացնելու համար վորոշվեց արտակարգ տուրք գնել Սիմբոնովյան կուրակների և վաճառականների վրա: Մյուս որը Շչորսին առաջարկեցին ընդունել ջոկատի հրամանատարությունը:

Վող Սիմբոնովկան վոտի եյին հանել: Յանկապատերին հայտարարություններ եյին փակցրած ջոկատի մեջ կամավորներ հավաքագրելու մասին: Մի քանի ընկերներ մեկնեցին շրջակա գյուղերը, աղիտացիա անելու և զենք հավաքելու համար:

Կամավորները գալիս եյին Շչորսի մոտ մեկմեկ և խմբերով: Կնետեկը, վոր հարց ու վործի յեր յենթարկում բոլոր ջոկատ մանողներին, աշխատում եր ամբողջ որը:

Յերեմն Շչորսը մի կողմ կանգնած, լուս ականջ եր դնում խոսակցությանը և հանկարծ արագ, կտրուկ քայլերով մոտենում եր կամավորին, ու ուղիղ նայելով նրան, հարցնում եր.

— Պատրաստ ես հիմա կյանքով տալու հեղափոխության համար:

Յեվ յերբ տեսնում եր, վոր կամավորը շփոթված և անսպասելի հարցից, ասում եր արհամարհանքով.

— Վախկուտներ մեզ պետք չեն: Խուճապ պիտի տարածես: Հետո հրամայում եր.

— Հետ դա՛րձ, դեպի տուն, քայլով մա՛րձ:

Վոմանք գալիս եյին տրեխներով, Շչորսն ասում եր նրանց.

— Յեթե կոչիկներդ տանն ես թողել, յետ դարձիր ու բեր:

Մենք կոչիկներ չունենք:

Զոկատ եյին գալիս նաև բավականին թվով նախկին ճակատային զինվորներ: Վոմանք գալիս եյին հրացաններով: Մոտ քան տարեկան մի յերիտասարդ բերել եր նույնիսկ մի հաստոցավոր զնդացիր: Ներկայանալով, նա պատիվ տվեց ու զեկուցեց:

— Ներկայանում եմ ձեզ: Գնդացրորդ Փիվոնոդ: Խնդրում եմ հաշվեգրել բոլշևիկների կուսակցության մեջ:

Մոտ տաս որվա ընթացքում մինչև 300 հարյուր մարդ մըտավ ջոկատ:

Շչորսը մի քանի շարքային պարապմունքներ անցկացրեց նրանց հետ, և հետո տեղավորելով վողջ ջոկատի գույքն եշելունում, ուղեռորդելու ազդանշան տվեց: Զոկատը շարժվեց յերկաթուղով գերմանացիների դեմ, վորոնք արշավում եյին Գոմելի կողմից:

„Պionerск. Правда“-ից

ՅԵՐԳ ՎՈՐՈՇԻԼՈՎԻ ՄԱՍԻՆ

Տափաստանի արշավանքն ենք մենք հիշում,
Հեռուների բոց հրդեհը սմբուլի,
Բանվորական դաստիկներն եյին կովում,
Գնդեր կազմած, մարտիկները քաջարի:

Քայլում եյինք մենք արյունոտ վերստերով
Դեպի Զիրը, վոր սպիտակն եր ավերել,
Ընվ քայլում եր ուղմի սայլի մոտ, կողքով,
Մի մարտական հրամանատար անվեհեր:

Կովի բոցից խանձված դեմքով, աննահանջ,
Դոռ թշնամու սեղմ ողակն եր նա պատուել,
Կոփվներում, իրը ընկեր անդավաճան,
Մարտիկների ցավն ու խինդն եր նա կիսել:

Հողմն եր փչում, ձյուն եր մաղվում անընդհատ,
Դոնի այն կողմ բուքն եր ազատ ման դալի,
Դնդապետի քայլն եր ամուր ու հաստատ,
Նա չհանձնեց Դոնը կովում ահոելի:

Նա դաս տվեց իր բանակին ուղմական,
Խրամատներում, պատերազմի ժանդ ժամին...
Նա չհանձնեց Յարիցինը անսասան,
Պարտվեց, փախավ պրոլետարի թշնամին:

Գիտենք այսոր, վոր հզոր ենք ու զորեղ,
Ապագայում թե վոր կոփվ ելի լինի,
Վորոշիլովը լայն ուղիով իր անշեղ,
Իրը ընկեր, դեպի կոփվ կտանի:
Թարգմ. Հոփիսիմ Պողոսյան

(Հատված նույնանուն գրքից)

Հոկտեմբերի վերջին որերն են: Յերկրի վրա կախվել են ծանր արձճյա ամպեր: Նրանց միջից յերեմն-յերեմն նայում ե աշնանային պաղ արևը, բայց չուտով նորից թաղնվում է: Հյուսիսային քամիները տափաստաններում մոլեզնում են, չորացած, գեղնած փետրախոտը փախչում ե նրանց պաղ գրկախառնություններից: Իսկ նրանք սլանում են դեպի Մուգոջար հեռավոր լեռների գաղաթները:

Սակայն հյուսիսի ցուրտ քամիները, վոր հպատակեցնում են տափաստանների խոտերին, լեռների հուժկու բլրաշարքերի առաջ անգոր են, և այնտեղ գաղարում ե նրանց անզուսպ թըսիչքը:

Ցուրտ ե: Վոտքերը սառչում են... Շինելներն ել չեն տարացնում... / Մի քանի կարմիր բանակայիններ վոչխարի մորթուց փափախ են ծածկել: Այդ փափախները Մուկան և կարում, փափախներին կացրած կարմիր ժապավենիկներն Ակրամն և բերում, նա հաճախ գնում ե շտարն Ակայուրինոկ կայարանը. և այնտեղից բերում ե այդ ժապավենիկները:

Ինքն Ակրամը կարմիր յերիզ ուներ կարած վոչ միայն փափախի վրա, այլ և կրծքին կարմիր փոքր ժապավեն և մտրակիկի կոթը փաթաթած և կարմիր կտորով: Նրա Ցումրանի սանձր նույնպես վոլորած և կարմիր ժապավենով:

Վերջին որերը մարտեր չկային: Սակայն կարմիր բանակայինները մռայլ եյին և դժողոհ: Զմեռը սարսափեցնում եր:

Յերեկոյան հայտնի յեղավ, վոր գիշերը կամ լուսաղեմին սպիտակները հարձակման կանցնեն:

Այդ բանը Բիլյալին հաղորդեցին տուտրականները, վոր գալիս եյին սպիտակների կողմից, սակայն նա շատ չեր հավատում նրանց:

Բայ լուրերի այս անգամ պետք է մեծ ուժեր հարձակվեն յերկաթուղու ձախ կողմից չորրորդ Բաշկիրական գումար, աջից՝ Սպայական գումարը, իսկ թեւերից՝ կազմակների գնդերը: Բացի այդ՝ Բաշկիրական և Սպայական գնդերում իրը թե կան ութական գնդացիրներ և մեծ քանակությամբ պայթուցիկ գլուղակներ:

Շտարից ցուցմունքներ ստանալով, Ախտյամովը և Բիլյալը սկսեցին պաշտպանության պատրաստիկ: Հեռախոսիչ Մերգեկեր կապ հաստատեց շաբի հետ, վորը Յայ կայարանում եր գտնվում: Կոմունիստներն իրենց կուսակցական տոմսերը հանձնեցին Ախտյամովին:

Կես գիշեր է: Շուրջը լուսություն և տիրում, սպիտակների կողմից վոչ մի ձայն չի լսվում: Աշնանային ամպերը, վոր յերեկոյան ծածկել եյին յերկինքը, այլ ևս չկան: Փայլիլում են բյուրավոր աստղեր:

Ժամանակ առ ժամանակ ինչ վոր տեղ բարձրում լսվում երին տաք յերկրներ թռչող կոռունկների և սագերի կանչոցները:

Կարմիր բանակային Խեսամին, վոր արդեն կարողացել եր փոս փորել և այնտեղ տեղավորվել, դիմեց Յամագուլին, վորը նույնպես վերջացրել եր խրամատ փորելը նրանից յերկու քայլի վրա և հրակնատ եր շինում.

— Գիտե՞ս, Յամագուլ, անցյալ տարի, ճիշտ այս ժամանակ, յերբ սկսվեց սագերի վերադարձը, մեր գյուղում սկսվեցին «տալառամյալյարները»*):

— Ես «տալառամյալյարների» համար ժամանակ չունեմ, հրակնատը վոչ մի կերպ չեմ կարողանում հարմարեցնել: Մերի տափառան ե, նույնիսկ տաշեղ չես գտնի, իսկ ճմբերը բոլորովին չոք են, շարունակ փշրկում են, — պատասխանեց Յամագուլը:

— Իսկ ինչի՞դ ե պետք հրակնատը, — սկսեց Խեսամին անհոգ դեմքով: — Սա գերմանական պատերազմը չե: Հենց վար սպիտակներն սկսեցին առաջ խաղալ, գլուխդ պահիր և կրակիր քեզ համար: Կդիպչես լավ, չես դիպչի, ելի վաչինչ:

Յամագուլը միանդամից չպատասխանեց, կանոնավորեց հրակնատը և միայն դրանից հետո գլուխը բարձրացնելով՝ առաջ.

— Դու, Խեսամի, մի՞թե խորհրդային իշխանություն մռա որագործ բանվոր ես դառել: Ի՞նչ ե նշանակում: «Կդիպչես լավ».

*.) Տալառամյալյարներ— հասարակական ոգնություն և անային մահուլ պատրաստելիք:

չես գիպչիլ, ելի վոչինչ»: Դու, յեղբայր, շատախոսիր, բայց չափ ու սահման իմացիր...

Կես գիշերին հետախույզները մի անգամ ևս լրջեցին առաջավոր դիրքերը: Ամեն ինչ հանգիստ եր:

Զիալուր խմբերի մոտից սլացավ անհանգիստ Ակրամը. այստեղ նույնացն հանդարտ ե:

Գիշերը ցուրտ ե, կարմիր բանակայիններն անվերջ վեր են թռչում, թռչկոտում են տեղում, թափահարում են ձեռքերը, վորպեսպի տաքանան:

Բիլյալն իր հարյուրյակով տեղավորվեց լեռնագոգում: Լեռան վրա յերեք ձիավոր դիրք են կանգնել: Յերկաթուղու ձախ կողմից՝ Սալավատն և իր զորախմբով, ավելի ճախ՝ փոքր լիճ ե...

Կարմուխսոմետը հետախույզեց ափի յեղեղնուտը:

— Վոչ վոք չկա, գոնե մի ձկնիկ խայտար, — ասաց նա, վերադառնալով:

Լուսաղեմից առաջ խիստ քսմի փչեց. մի վայրկյան լույսի շերտը յերեաց, և նորից խավարը պատեց յերկիրը:

Հենց վոր արեւելքը շառագունեց, Ակրամը սլացավ և հաղարդեց.

Յերկաթուղու ձախ կողմից մի հետեւակ գունդ շարքերով դնում եր մինչեւ կիսակայարանը: Անցնելով կիսակայարանը, շղթա կազմեց և այժմ առաջ և վազում, իսկ աջ կողմում դեռ վոչինչ չի յերեսում...

Հաղորդելով այս տեղեկությունը, Ակրամը սլացավ Բիլյալի խմբի մոտ:

Ախտյամովը հրամանատարների միջոցով շղթային հաղորդեց հրամանը՝ կրակել, յերբ թշնամին բոլորովին կմուտենա:

Սկսեց լուսանալ: Մարտիկները նկատեցին, վոր Զորբորդ բաշկիրյան դունդը վազում, անցնում և խմբակներով:

Սպիտակներն առաջ թողին ամբողջ Զորբորդ բաշկիրական դունդը, իսկ պահեստում դնում եր Սպայական գունդը:

Իսկ յերկաթուղու աջ կողմը միանգամայն մերկացվել եր:

Բաշկիրական գնդի վրա առաջին անգամ միահամուռ դընդացրային կրակ բացին յերկրորդ գումարտակի յերկու գնդացիրը:

Գնդացիրների տրաք-տրաքոցը ցրեց լուսաղեմի անդրությունը:

Գնդացիրներից հետո համազարկ ավելի վաշտերը և անցան համախակի կրակի:

Բաշկիրական գունդը մի քանի բռակե անշարժ պատկել եր զետնին:

Զինվորներին մտրակներով քչող սպաների բարձր հայհոյանքը նորից վոտքի հանեց գունդը և նա «Ռուս» բացականցունվ հարձակվեց կարմիր բանակայինների վրա:

Կարմիր բանակայինների միահամուռ կրակը նորից քայեց սպիտակների շարքերը: Մի քանիսն ընկան գետնի վրա, ուրիշները փորձում եյին աննկատելիորեն հետ սողալ: Սպիտակների շարքերում նորից լսվեցին հայույանք և աղաղակներ, նրանք առաջնետվեցին, կատաղությունը գոռալով և բաղմաթիվ վիրավորներ ու սպանվածներ թողնելով կարմիրների մահացու կրակի տակ: Մինչև կարմիրների դիրքերը ընդամենը յերկու հարյուր քայլ եր մնացել:

Հաշվի առնելով փամփուշտների փոքր պաշարը, Ախտյամովն արդեն մտադրվում եր գրոհի անցնել, յերբ անսպասելիորեն, կայծակի արագությամբ Սալավատի զորախումբը գրոհեց սպիտակների աջ թեկի թիկունքը:

Նախորոք իրազեկ լինելով Սալավատի այդ զորաշարժի մասին, Բիլյալը նույնպես անսպասելիորեն հարձակվեց սպիտակների ձախ թեկի վրա:

Այդ անսպասելի հարվածը յերկու կողմից Բաշկիրական գնդի մեջ շփոթություն առաջ բերեց: Նա խուճապի մտանված ոկոնց հետ նահանջել, իսկ Սպայական գունդը կրակ բահանչողների վրա, վորն ել ավելի մեծ խուճապ առաջացրեց Բաշկիրական գնդի զինվորների մեջ: Սալավատը իր հեծելազորի գլուխն անցած, խրվեց փախչող զինվորների մեջ: Կարմիր բանակայիններն սկսեցին աջ ու ձախ կոտորել, սակայն Սալավատի զորեղ ձայնը նրանց կանգնեցրեց.

— Անձնատուր յեղողներին ձեռք չտալ, ընկերներ...

Ինքն ել հասավ փախչող սպային և թրի մեկ հարվածով վերջ տվեց նրա կյանքին:

Լսելով Սալավատի վերջին խոսքերը, մոտավորապես քանի զինվոր բաշկիրները շարտեցին հրացանները և ձեռքերը բարձրացրին վերև:

Կալմաւխամեալ և ելի միքանի կարմիր բանակայիններ շըրջապատեցին նրանց ու պահվելով Սպայական գնդի զնդացիրներից, գերիներին արագորեն տարան լճի մոտ:

Յերբ նահանջողները միացան Սպայական գնդին, այնուղ լսվեց անկանոն հրացանաձգություն:

Բաշկիրական գնդի ջարդից կես ժամ հետո, Սպայական գունդը հարձակման անցավ: Սակայն Յայսանից յեկած զրահա-

դընացքը հրանոթներից կրակ բացեց և Ախտյամովի գումարտակի հետ ստիպեց Սպայական գնդին նահանջել, թողնելով տասնյակներով սպանվածներ և վիրավորներ:

Մարտը շարունակվեց մինչև յերեկո: Բիլյալը հետապնդում եր նահանջողներին, այդ ժամանակ կապակների հարյուրյակը փորձեց նրան շրջապատել, սակայն Յախյայի վրա հասած դրամում կազմկներին գրոհեց թեկից, և նրանք փախան:

Յերբ Սպայական գունդն սկսեց առաջ խաղալ, Բիլյալը վճռեց անցնել նրա թիկունքով և հեռացավ խորքը: Անսպասելիորեն յերեացին մի կողմից լսվեցիրական հեծելազորը, իսկ մյուսից՝ կազմկները: Բիլյալն իրեն չկորցրեց և վճռեց իր խըմրով նահանջել գեղվի լեռնագուգը: Բաշկիրական հեծելազորի մի մասը սլացավ նրա հետեւից:

Արդեն վրա յեր հասնում յերեկոն, յերբ Բիլյալը կանգնեցրեց իր զորախումբը:

Սպիտակները մնացին հեռու հետեւում: Հոգնած կարմիր բանակայինները ցած իջան փրփրած ձիերից: Նահանջի ժամանակ Գաֆարը կորցրել եր իր ձին, գնդակը պոկել եր Յումրանի գովակի կաշին:

Բիլյալը կորուսաներ չուներ: Նա մարտիկներին հարց ու փորձ եր անում նրանց ինքնազգացման մասին և ուրախությամբ լուսմ եր նրանց խոսակցությունները:

— Յես արդեն հասնում ելի մի կազմակի և այն և թուրո վրա եյի բերում, յերբ նրա ձին սայթաքեց ու նա զուրս թուավ թամրից: Այդպես ել չհաջողվեց նրան վերցնել, — պատմում եր մի կարմիր բանակային:

— Յես նույնպես հասա մի սպայի: Նագանը բանել ե և կրուակում ե ինձ վրա, իսկ ինքը շարունակ աչքերն ե թարթում, յերեկի աչքերը վաս եյին տեսնում, — վոչ մի զնդակ ինձ չկպավ:

— Համա թե այսոր տաք եր հա՞: Բայց թե սպիտակները լուս ստացան....

— Այդպես ել պետք ե: Ուրիշ անդամ նրանք ցանկություն չեն ունենա համառելու: Ահա կտեսնես, մի քանի որ... և նրանց հոտն ել չի լինի այստեղ....

Հանկարծ վոչ հեռվում յերեացին հինդ ձիավոր:

Տեսներով կարմիր բանակայիններին, նրանք կանդ առան:

— Սպիտակներ են, — գոչեց Ակրամը:

— Հեծեք ձիերը — հրաման տվեց Բիլյալը:

Զինվորները չուռ յեկան: Մարտիկները չսպասելով նոր հրամանի, սլացան նրանց հետեւից:

Մի քանի բռպեյից հետո սպիտակների հետախուզությունն

ընկառի ոզակի մեջ, վորը հետզհետե սեղմվում եր: Զորս զինվոր գետին շպրտեցին հրացանները և թրերը, իսկ հինգերորդը՝ վոր ուսագիրների վրա յերեք վրակար ուներ, առաջանդակելով ձին, փորձում եր փախչել: Բիլյալն ինքը զինաթափ արեց նը-բան:

Գաֆարը մոտեցավ ունտերին և զայրացած դոչեց.

— Քու ի՞նչն եր պակաս, չուն,— և կտրուկ շարժումով պոկեց նրա ուսագիրները:

Բիլյալը ձեռքով հետ քաշեց Գաֆարին և ասաց.

— Զեռք մի՛ տա...

Բիլյալը չգիտեր, վոր այդ գերին Գաֆարի յեղբայր Մագ-ֆարն ե:

Գաֆարը զղջում եր, վոր նրան չի գնուակահարել հենց աե-զում: «Այդ ինչպէս յեղավ,— տարակուում եր Գաֆարը, — Հա՛: Նա իր վրա չի փորձել կուլակի մտքակը, անհոգ մեծա-րել և իմ մեջքի հետեւում...»

Ծեր Շիգարն արածացնում եր տանուտեր Մագդիկ հոտը, իսկ Գաֆարն արածացնում եր նրա ձիերի յերամակները, հեր-կում եր նրա հողը, հարում խոտը, կոտորում վայորը: Մա-գուֆը դեռ բոլցրովին փոքր եր, իր մոր մահից հետո Գաֆարը ստիպված եր խնամել Մագֆարին: Թեև հայր և վարդի Մագ-դիկի մոտ բատրակ եյին, սակայն Մագֆարին նրանք ուղար-կում եյին ուսական դպրոց: Հաղարինհարյուր տառնմեկ թը-վին, մի ձմեռային ցուրտ որ, ծեր Շիգարը կարճատե հի-մանդությունից հետո մեռավ. հետեւալ տարին Գաֆարին զին-վոր տարան: Մագֆարը շարունակում եր սովորել և նրան բա-նակ չտարան. յեղբայրը ծառայության մեջ եր և նրան աղատե-ցին յերրորդ կարդի արտոնությունով:

Դրանից հետո նա թողեց ուսամը և գործակատար դարձավ մի մոլլի մոտ, վորը խոշոր առետուր ուներ: Սկսվեց գերմա-նական պատերազմը: Յեվ այստեղ Մագֆարի բախտը բանեց: Աղան նրան ոգնեց աղատվել զինվորությունից. պատերազմի ժամանակ մոլլի գործերը հաջող գնացին և Մագֆարը դար-ձավ սպազ գործակատար:

Հաղարինհարյուր տասնութ թվի գարնանը, յերբ Գա-ֆարը վերադարձավ ուղմանակատից, Մագֆարն արդեն ինը նուրույն առետրական եր, ուներ խանութ, տուն, կով և ձի-րնտանիք եր կտզմել. խանութում առետուր եր անում կինը, իսկ ինքը գնումների համար, շրջում եր խոշոր շուկաներ, հա-ճախ լինում եր Սամարայում, Ղաղանում, Որենրուրդում:

Գաֆարին նա դիմավորեց սիրալիր կերպով.

— Փառք աստծո, վոր վողջ ու առողջ ես վերադարձել, Գաֆարը աղա, այժմ գործի անցիր: Յես մի ձի ել եմ զնում: Դա ել գիտես, վոր հաճախ հարկ ե լինում շրջագայել առետրական գործերով, իսկ զու այստեղ տնտեսությամբ զբաղվիր... յեթե ամեն ինչ հաջող գնա, գարնանը քեզ կամուսնացնենք...

Այդ խոսքերը շատ վիրավորեցին Գաֆարին, սակայն նա լոեց և յեղբորը չասաց, վոր փախել ե ուազմաղաշտից: Մի քանի որից հետո նրան բռնեցին վորպես դասալքի և ուղարկեցին պա-հեստի գումար: Այդ ժամանակից սկսած Գաֆարը վոչ մի տեղե-կություն չեր ստանում յեղբորից...

Յեվ ահա այսոր վիճակվեց հանդիպել:

ԴՈԼԱՐԵՍ ԻԲԱՐՈՒԻՐԻ

ԼԻՆԱ. ՈԴԵՆԱՅԻՆ

Դու մեղ հետ չեյիր, բայց մենք զդում եյինք, վոր դու մեր միջեվն ես: Դու մեղ պետք եյիր... Մենք չեյինք կարող քեզ վոխարինել քո դիրքի վրա, վորովհետեւ զու միակն եյիր: Միշտ աշխուժ, զոծունյա, սիրալիր, նվիրված, ծիծաղկոտ, — զու ան-շեղորեն հավատացած եյիր ապագային՝ նույնիսկ ամենածանր բռպեներին... Յեվ ահա այժմ զու չկաս... Լինա Ողենան մե-ռավ, այսպես մեղ ասացին, բայց մենք դրան հավատալ չեյինք կարող: Չենք կարող հաշտվել այն մտքի հետ, վոր զու ընդմիջու հեռացար մեզնից :

Մեզանից ամեն մեկի համար Լինա Ողենան քույր եր, ընկերուհի յեր, ընկեր եր: Ինչ դժվար ե հաշտվել այն բանի հետ, վոր այլևս չես տեսնի նրան, չես լսի նրա ձայնը, նրա կատարնական արտասանությունը, նրա ճառերը աշխատանքի. վճռեկան հաղթանակների պատրաստվելու, Փաշիզմը վոչնչաց-նելու մասին...

Լինա, թանկադինու... Իմ աչքերը լցվում են արտասությով, բայց լաց լինել չեմ ամաչում, վորովհետեւ յես վողբում եմ քեզ, չե՞ վոր դու մեղ համար հաստատուն հույս եյիր յերիտա-սարդության դաստիարակման տիտանական գործում. չե՞ վոր դու մեր ամենասիրելի ընկերուհին եյիր, մեր քույրը... Դու առաջինն եյիր աշխատանքում, ինքնազոհան մեջ:

Լինա Ողենան կանգ չեր առնում վոչ մի անձնազոհության առջե, չնայոծ իր յերիտասարդությունը, նա տարիներն անց եր

կացրել ընդհատակում, սոկունությամբ տարել եր բանտի սահ-
ջանքները...

Հոկտեմբերի հիշատակելի որերին նա վերցրեց Հրացանը և
գրավեց իր պոստը... Նա վիրավորված եր...

Յերբ հիշում եր, թե ինչպես եյին փախչում ռեակցիոներ-
ների զորքերն ընկերների ջոկատի առջևում, վորոնք զինված
էյին Բարսելոնում գրաված Հրացաններով,— այն ջոկի առ-
ջևից, վորի հոգին եր նա ինքը, — Լինան վարակիչ հոհում եր
և նրա աչքերը ցոլում եյին կովի հիշմունքով:

Նա, ինչպես վոչ վոք, սիրում եր իր յերկիրը, իր կատա-
րոնիան, վորը յերազում եր գարձնել ազատ՝ ինչպես ազգային,
այնպես ել սոցիալական խմասում, սակայն խոր դասակարգա-
ցին զգացմանքը դրդում եր նրան պայքարել միաժամանակ թե
իր ժողովրդի և թե ամրող ժողովրդի, բոլոր ճնշվածների
ազատագրման համար:

Հանցավոր խռովարարությունը հանդիպեց նրան Ալմերիա-
յում, և Լինան, կատարոնոււծին, կատարոնիայի ըզձերի բոցա-
վառ մարտիկը, հեղափոխական պարտք համարեց կանգնել ան-
դալուզյան իր յեղբայրների շարքում, վորպեսզի նրանց վոզե-
վորի իր որինակով, վորպեսզի յեթե պահանջվի, զոհի կյանքը,
վորպեսզի զոհվի հանուն հեղափոխության:

Նրա մահը նույնպես և հերոսական սիրագործություն և:
Լաֆուենտե Արդաները, Լինա Ողենաներն առաջանում են մի-
այն ժողովրդի մեջ, վորն իր կյանքն ստեղծում և մշտական
ինքնազոհությամբ, անանուն սիրագործությամբ, մեծագույն
ինքնահրաժարումով:

Լինա Ողենան միշտ հիշում եր Արդա Լաֆուենտեյին. ինչ-
պես և նա, Լինան յեվս մահացավ, կատարելով սիրագործու-
թյուն, վորը կանմահացնի բրոնզը. Նրա անունը միշտ կմնա-
խպանական հեղափոխության պատմության մեջ:

Մեր ընկեր Պրետելու հետ միասին նա զեկավարում եր
Գրենադայի մոտ դասավորված զորացյունը, ուրիշ ընկերոջ
ուղեկցությամբ նա անցավ առաջավոր դիրքերից: Նրանք մո-
լորվեցին և ընկան հակառակորդի զոնան, նրանք պաշտպանվում
եյին, նրանք զործածեցին իրենց ատրճանակների բոլոր փամ-
փուշտները՝ կրակելով իրենց շրջապատող թշնամիների վրա:
Լինան թանդ վաճառեց իր կյանքը. վերջին գնդակը հատկաց-
րեց իրեն, նա չցանկացավ հանձնվել թշնամիներին—և ինք-
նասպանություն գործեց: Նրա դին թշնամիները տարան
Գրենադա, ինչպես հաղթության ավար:

Նրա հետ կովող, նրան անսահման սիրող բանվորները,
գյուղացիները, զինվորները, նավաստիները և ողաչուները ցա-
վից սեղմում են այժմ բռունցքները և կատաղորեն խռոտանում
են նրա վորիարեն վրիժառու լինել:

Նրանք այդ խռոտումը կկատարեն... Յեզ վաղը, յերբ Փա-
շիզմը վոչնչացնող ժողովրդի հանդիսավոր յերդերը կհնչեն
Գրենադայի բոլոր փողոցներում և հաղթական դրոշները կծա-
ծանվեն Ալկասարի վրա, վորպես անցած փառքի հուշարձան,
Լինա Ողենայի, իր վողջ կյանքը Գրենադայի ազատագրման հա-
մար նվիրված պատանի կոմունիստուհու մասին, կվերապրեն
հիշողությունները, տպագոտ սերնդին ոլատմելով ազատություն
ձեռք բերելու համար անցած դաժան ուղիի մասին:

Լինա Ողենա՛: Յերիտասարդության վարո՞ւ: Հերոսության
և ինքնադրհման հիանալի որինա՛կ: Քո զոհաբերված զիակի ա-
ռաջ խոնարհվում են տիբրությամբ համակված մեր գրոշները:
Դու անմահ դարձար: Վաղը, յերբ վոչնչացված կլինեն քո զա-
հիճները, մենք կսփռենք քո մտրմինը ծածկող Գրենադայի ա-
զատ հողի վրա մեր քնքության և սիրո անթառամ ծաղիկները:
Մենք քեզ յերբեք չենք մոռանա, և քո անունը կդառնա զրոշը
բոլոր կանանց, վորոնք պայքարում են Փաշիզմի և կեղեքման
գեմ:

Ֆ. ԱՆԱՐԱՎ

ԶԻՆԱՅԻ ՊԻՌՆԵՐ—ՀԵՏԱԽՈՒՅՑ ԶԼ
 իմացիր անվլքել գնդակ արձակել,
 թշնամու աչքից թուղթ տանել թագուն,
 Սռվորիր կարդալ հրթիռի լույսեր,
 Ազդանշան տալ ու մնալ տոկում:

Վարժվիր ճամբեքին, արահետներով
 Առաջնորդիր դու անվհատ միայն.
 Դաժան, խի'ստ կռվի այս մեծ որերին
 Ու լույս գալիքին դարձիր ջեն-տա-այն*):

Կուլակը նենդ ե, չար ու պերճախոս՝
 «Դաղարե՛նք կռվել, անդորր մեղ»... կասի,
 Պրոպագանդ արա, կարմի՛ր հետախույզ,
 Դասակարգային պայքարի մասին:

Ասա՛ գեղջուկին, մայր հողն ել մեղ հետ
 Մեր իսկ քրափինքով թեև հազեցած,
 Զի՛ տա բրինձ, քանի աղքատն ու կուլին
 Տերերին բոլոր չեն գլորել ցած:

Թարգմ. Ա. ՌՀԱՆԴՅԱՆ

*) Հետախույզ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Մեղուներին ուսումնասիրող մարդիկ վաղուց միջոց եյին փնտուամ միեթակի կյանքն ամեն որ այնպես դիտել, վոր նրա բնակիչներին չանհանդստացնեն:

Վերջապես այդ նպատակի համար նրանք հորինեցին միեթակ ապակյա կտվարիչով: Մեղուները նրա մեջ ապրում և աշխատում են ճիշտ այնպես ինչպես ովզորական միեթակի մեջ: Նրանք նույնիսկ չեն կասկածում, վոր նրանց ամբողջ ժամանակ հետևամ և մի ինչ վոր հառած աչք:

Համաշխարհային պատերազմի ժամանակ մարդիկ ընկան, թերևս նույնազիսի դրության մեջ, ինչպիսին այդ մեղուները: Նրանց սկսեցին հետեւել վերևից, յերկնքից, թշնամու ողաչուների աչքերը:

Իսկ այստեղ, վորտեղ ընկնում եր թշնամու հայացքը, նրա հետեւից վայր եյին ընկնում նաև նրա ոռում բերը:

Ինչպես թագնվել այդ հայացքից, ինչպես խարել նրան: Հարկագոր և անտեսանելի դառնալ: Սակայն մի՞թե մարդ կարող է անտեսանելի դառնալ:

Իհարկե, կարող ե: Մենք բոլորս ել մանկությունում տափեկնոցի յենք փաղացել: Թագնվել այդ նշանակում է աննկատելի, անտեսանելի դառնալ:

Ահա և պատերազմում ներկայումս գործադրում են տափեկնոցու բոլոր ձեերը. ոգտագործում են ամեն տեսակի թագըստոցները, անտառը, գիշերային մթությունը, մառախուղը:

Սակայն վոչ գիշերվա մթությունը, վոչ մառախուղը պատվերով չեն յերեսում հենց այն ժամանակ, յերբ նրանք հարկավոր զի՞ կարելի, արդյոք, յերեիցն սեփական ցանկությամբ սուրբել գիշեր առաջացնել: Զի՞ արդյոք, այնպիսի գործիքներ, վարոնցով կարելի լիներ որը ցերեկով գիշեր բերել:

Այդպիսի գործիքներ արդեն կան: Այդ ծխագլանակներն են: Նրանք պատճապատ գնացքը, տանկը կամ մարտիկների զարա-

խումբը պատում են թանձր խավարով, կարծես թե գետնի այդ
մասի վրա անսպասելիորեն գիշեր ե իջնում:

«Կովի դաշտերը գալիք պատերազմում, — առում ե ամերի-
կացի դեներալ ֆրայսը, — պետք ե պատած լինեն ծխով: Նրանք
պետք ե այստեղ և այստեղ ծածկված լինեն ծխի մեծ ու փոքր
բծերով և քուլաներով: Յուրաքանչյուր վորորդ, վորն ստիպ-
ված ե յեղել բաղ վորալ խիտ մառախուզամ, յերբ չորս կող-
տից լսվում ե նրանց կոնչյունը և հարկ ե լինում յա-բախտ
կրակել նրանց կանչոցի վրա, կարող ե պատերացնել, թե ինչ-
քան գժվար ե դիպչել անտեսանելի թշնամուն, վորի տեղը կարե-
լի յէ վորոշել միայն չնչին աղմկով կամ խչոցով»:

Ծուխը ձեզ կարող ե թագցնել ամենաօրտառես գիտողից:

Սակայն պատերազմում այլպիսի արհեստական գիշերով
ոգովելը միշտ ել հարմար չէ: Զե՞ վոր ծխի ծածկոցը ձեզ վոչ
միայն անտեսանելի յէ գարձնում, այլ և կուրացնում:

Զկա՞ արդյոք մի վորեվե ավելի հարմար ձև թշնամու-
աշքից չքանալու համար:

Գիտե՞ք, արդյոք, դուք թիթեսնիկ ցախսարեկին: Յերբ
նա թոշում ե, նրան հեշտությամբ կարելի յէ նկատել: Իսկ
յերբ այդ թիթեսնիկը նստում է ծառի վրա, նա միանգամբից
անհետ կորչում է: Նրա թեսերի դույնը միաձուրվում է ծառի
կեղեկի գույնի հետ: Նրան հեշտությամբ կարելի յէ բնդունել
կեղեկի կտորի կամ գունդ ցեխի, կամ չոր տերեկի տեղ: Կարելի
յէ նրա դեմքին յերկար նայել, բայց նրան չնկատել:

Պատահե՞լ են, արդյոք, ձեզ յերբեքցե չոր վոստիկներ,
վորոնք ձեր իսկ առաջին շփումից հանկարծ կենդանան,
սկսեն վոտքերը շարժել և փախուստի գրիմել ձեղնից:

Տեսե՞լ եք, արդյոք, դուք հողակույտեր, վորոնք անսպա-
սելիորեն ձեր վոտքերի տակից գուրս են թոշում ճշարով:

Տեսե՞լ եք, արդյոք, դուք ձյունի զնդեր, վորոնք մի կողմէ
են թոշում և փախչում, ականջները սրած:

Նըշակացության մեջ բոլորովին աննկատելի դառնալու
հենց այդ արվեստն ել պատերազմում անհրաժեշտ ե: Այդ քո-
ղարկման արվեստն ե:

Գալիք պատերազմում ամեն ինչ իր գույնն ու տեսքը կիո-
խի: Ամեն ինչ գրիմ արված կլինի, ինչպես թատրոնի գերտառ-
նի յերեսը: Սակայն թատրոնում մարդ գրիմ ե անում ուրիշ
մարդու նմանվելու համար, բայց նրա գլխով յերեք չի անցնի
գրիմ անել՝ թիթին կամ կոճղին նմանվելու համար, իսկ պատե-
րազմում ամենաանսպասելի կերպարանափոխություններ կլի-
նեն:

Ջիուն և զերբին, իհարկե, գժվար չե իրարից տարբերել:
Սակայն համաշխարհային օրատերազմի ժամանակ Աֆրիկայում
ճակատամարտող զերմանական հեծելակները սկսեցին իրենց
ձիերը ներկել ու և սպիտակ բծերով: Յեվ այդպիսի ներկումը
հաճախ անգլիացիներին թյուրիմացության մեջ եր զցում:

Թնդանոթ և խլածաղիկ, — ի՞նչ նմանություն կա նրանց
մեջ: Սակայն գերմանական զորքերը սկսեցին զզուշանալ խլա-
ծաղիկներից այն ժամանակից սկսած, յերբ Փրանսիացիները
չորինեցին «№ 1 մարկի մարզագետինը՝ խլածաղիկներով»:
Այդ մարզագետիներով, վոր շինված ելին ցանցերից պատա-
րհետառական խոսով և սպիտակ բծերով, ծածկում ելին Փրան-
սիական մարտկացները:

Ահա ձեզ սովորական, մամուռով պատած կոճղ. իրակա-
նում նրա ներսը փուչ ե, իսկ այնտեղ նստած է մարդ բինոկ-
լով:

Ահա ձեզ թումի՝ վարթամ, խիտ տերեւներով, բայց բոլո-
րովին առանց արմատների. այս թումիը պատրաստված է ա-
ռանձին, իրարից կապիստած ճյուղերից, իսկ նրա տակ պահ-
վում է գնդացիր:

Ահա ձեզ ճյունակույտեր: Նրանք հազիվ նկատելի սողում
են գաշտերով: Իրականում այդ մարդիկ են՝ սպիտակ խալաթ-
ներով:

Թատրոնում վաչ միայն գրիմ են անում, այնուղ նաև զե-
կորացիաներ են կանգնած: Իսկ կինոյում նկարահանելիս ող-
տվում են մակեաներով: Դուք եկրանի վրա տեսնում եք, թէ
ինչպես տրւնը հրդեհվում է, նավը խորտակվում: Դուք այդ
տրւնը և նաև իսկականի տեղ եք ընդունում: Իսկ իրականում
նրանց հատուկ պատրաստել են կինոյի համար թղթախմորից.
Տունը ընդամենը մի պատ ունի, այն պատը, վոր զուք տես-
նում եք եկրանի վրա, իսկ ամբողջ նավի փոխարեն հավաքնի
են միայն մի կողը: Ինչո՞ւ համար կառուցել ամբողջ տունը
կամ նավը: Հանդիսականը չե՞ վոր չի կարող ձեռքը մեկնել և
շոշափել, թէ, արդյոք, այդ իրերն ունե՞ն այն մասերը, վո-
րոնք զբսից չեն յերեւում:

Սակայն չե՞ վոր և ողաչուն նույնպես չի կարող յերկըն-
քից ձեռքը մեկնել և շոշափել այն իրերը, վորոնք յերեւում են
գետանի վրա: Դրա համար ե այն կեղծ իրերը, վոր պատերազ-
մունի վրա: Դրա համար կառուցում են նրա համար, վորպեսզի թշնամուն խարեն,
իսկականներին նման են միայն մեկ կողմից՝ վերեկից:

Համաշխարհային պատերազմում զերմանացիները համար-

յա տանկեր չունեյին։ Վորապեսղի հակառակորդն այդ ժամին գլխի չընկնի, գերմանական հրամանատարությունը ուազմաճակատից վոչ հեռու ցուցադրում եր հարյուրավոր կեղծ, կորոնէ տանկեր։

Համաշխարհային պատերազմի ժամանակ ամենաբարդ քողարկող սարքավորումերը կառուցել են ֆրանսիացիները և անգլիացիները։ Այդ կառուցումներն ողնում եյին քաղաքները փրկել գերմանական ոդային հարձակումներից։

Համաշխարհային պատերազմի վերջին տարիներին գերմանական ցեղելինները և ինքնաթիւնները հաճախ ողից ամբողուծում եյին Լոնդոնը։ Նրանց գլխավոր նպատակն եր քանդել այն տունը, վորտեղ գտնվում եր անգլիական ուազմական նախագարությունը։

Ինչպես թագդնել թշնամուաչքից այլպիսի հօկայական շենքը։ Անգլիական քողարկողներն այսպիսի խորամանկության դիմեցին. շենքի տանիքը բոլոր կողմերից շրջապատեցին վոչ բարձր կողերով, այնպես վոր տանիքը նմանվեց սկուտեղի վեր ծռած ավերով. և այդ հսկայական սկուտեղը ջրով լցրին։ Այդ ժամանակից սկսած գերմանական ողաչուններն ինչքոն ել տշխատում եյին, վոչ մի կերպ չեյին կարողանում ուազմական նախարարության շենքը գտնել. նրանք յերկնքից իրենց տակ տեսնում եյին ջրի հարթ մակերեսը, լիճը. իսկ լճի մեջ, իհարկե, չարժեր ոռամբ գցել։

Իսկ Փրանսիացիները գերմանական ոդային հարձակումներից պաշտպանվելով, կառուցեցին մի ամբողջ կեղծ Փարիզ — իսկական Փարիզի պատճենը։ Այդ քաղաք-մակետը կառուցեցին Փարիզից վոչ հեռու Սենա գետի հարեան պտույտի վրա։ Նոպետք և թյուրիմացության մեջ գցեր գերմանական ողաչուններին, իր վրա ընդուներ նրանց ոռամբերը։

Հ Յ Տ Օ Վ Ա Զ Ո Ր Ա Ց Ի Ն

Հ Յ Տ Օ Վ Ա Զ Ո Ր Ա Ց Ի Ն

Ռազմական ճանապարհով
Անցանք մենք կուռ պայքարով
Մարտական տասն և ութ թվականին.
Կարճ եր հավաքն այս անդամ —
Վոլգայից մինչև Կուբան
Նժույգներն մենք յերթի հանեցինք։

Փոշու միջով տոթակեզ,
Բուդյոննու հետ՝ նետի պես
Սըլացանք — մեծ գործն եր մեզ կանչում.
Չառիվայր բլուրներով,
Արագավազ գետերով —
Մեր փառքն եր ամեն տեղ զիլ հընչում։

Զամոստեյում և Դոնում
Ապեսանկ մինկերին են փառում,
Վոսկերն են լիզում զիլ հողմերը.
Հիշիր գու, եյ ատաման,
Հիշիր նաև գու, եյ պան,
Հեծելազորային սուսերը։

Թե մեր յերկիրը խաղաղ,
Կովի բռնվեց — անհապաղ,
Գնդացը հորդ անձրև կմաղենք.
Ուզիներով մեզ հայտնի.
Ժողկոմի հետ սիրելի —
Դեղլի մարտ ձիերով կըթաշենք։
Քարոզ. Մ. Դարգ.

ՅԵՐԳ ՇՋՈՐՍԻ ԶՈԿԻ ՄԱՍԻՆ

Խոսք Մ. Գաւողնիկ
Մարշը տեսացով.

Պատ. խմբագիր՝ Մ. Դուրգարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

ՅԵՐԳ ՇՋՈՐՍԻ ԶՈԿԻ ՄԱՍԻՆ

Ամի մոտով ջոկն Ե քայլում,
Անցնում է առաջ,
Ալ դրոշն է իր ծածանում
Գնդապետը քաջ:

Եյ ջահելներ, ո՞ւմն եք, ասե՞ք,
Ո՞վ է ձեղ տանում,
Ալ դրոշի տակ անվեհեր,
Վիրապվոր քայլում:

Նա դլուխն է իր փաթաթել,
Թեվին ալ արյուն,
Արյան հետք է ահա փովել
Խոտի կանաչում:

Բատրակների մենք վորդիներ՝
Մենք նորի պաշտպան,
Շչորսն է պարզել իր դրոշը վեր
Կարմիր պարտիզան:

Մենք մանկուց ենք արդեն կովել,
Հպարտ ենք ու ազնիվ,
Վիննիցայից պետք է քշել
Թշնամուն անթիվ:

Հետմանի հետ, Պետլյուրայի,
Հաճախ ենք կովել,
Գերմանացուն առանց ահի
Հեռու յենք փախցրել:
Շող արելն է ներքեվ թեքլում,
Յել ցողն է թափվում,
Հեռվում լսվող ձիանց դոփյուն,
Զայներն են լուս:

Թարգմ. Հո. Պողոսյան

Գլավլիտի լիազոր 2—3555. Հրատ. 4486

Պատում 135. Տիբած 5000

Թուղթ 62×94. Տպագր. 4¹/₄ մամուլ.

Մեկ մամ. 24·480 նիշ. Հեղինակ. 3 մամ.

Հանձնված է արտադրության 7 փետրվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության 15 փետրվարի 1938 թ.

Գինը 1 լ. 20 կ.

ԳԵՂՑՐԱԾԻ 1-ԻՆ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65



тираж 500

ԳԻՒԾ 1^ո. 204.

Կ ՀՎԱՑԱՏՈԳՈ ԼԵՏԻՅՈ
ԿՐԱԾՆՈՅ ԱՐՄԻՆ
ԼԻԶ. ԱՐՄ. Ս. Ը. ԵՐԵՎԱՆ.



NL0166310

ՀՀ Ազգային գրադարան

